

ՔՅՈՒԶՈՒՔ ԱՐՈՒԹԻՆ

ՊԱՏՄՈՒՅՑՈՒՆ ՔԱԶՄԱԶ ՂՈՒԼՈՒ

ԴՆՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Հաղար հարյուր քառասուն ութը թվին (= 1735), ախոռապետությունից բարձրացած Մուստաֆա փաշայի և զեսպան Ավաիլ Զեքի խանի հետ մեկնեցինք զեպի Իրան:

Ութը ամսում հասանք Իրան: Այն ժամանակ Իրանի շահը Քահմաղ Ղուլին էր: Սպահան հասանք, բայց Քահմաղ Ղուլին այնտեղ չէր, գնացիլ և Ղանտահարը պաշարել էր:

Ավաիլ Զեքի խանը սուրհանդակ ուղարկեց Ղանտահար Քահմաղ Ղուլիի մոտ թե՛ մեր տեր շահը ինչ կը հրամայե, արդյոք զեսպան փաշային (Մուստաֆա փաշային) Զեզ մոտ Ղանտահար առաջնորդենք:

Քահմաղ Ղուլին պատասխանում է Ավաիլ Զեքի խանին՝ «Հանգրվան-հանգրվան հյուրասիրելով, պատվելով Ղանտահար առաջնորդեցեք»:

Քահմաղ Ղուլին հարցրել էր նաև Ավաիլ Զեքի խանին թե՛ զզեսպան փաշան նախքան զեսպանության ուղարկվելը Մուլթանի մոտ ի՞նչ պաշտոնի էր: Ավաիլ Զեքի խանը պատասխանել էր. «Գլխավոր ախոռապետն էր»:

Մի քանի օրից հետո Սպահանից մեկնեցինք զեպի Ղանտահար:

Առաջինը հասանք Պեմ, որն Սպահանից 7 հանգրվանի ճանապարհ է:

Պեմից գնացինք Եզզ, որը Պեմից 10 հանգրվանի ճանապարհ է:

Եզզից մեկնելով՝ հասանք Քիրման, 10 հանգրվան էլ այս ճանապարհն է:

Եզզի և Քիրմանի մեջտեղն է դանվում «Ավազի ծով» կոչվածը (անապատը), որի ավազը ժամացույցի ավազի նման սպիտակ և մանր է: Այս «Ավազի ծով»-ում ընկած էին մի քանի գյուղեր:

Օտարական-ճամբորդը այս գյուղերից անցնելիս, եթե մի գյուղից մյուս գյուղն է նայում, կարծում է ձյուն է եկել, այնպես սպիտակին է տալիս:

Ճանապարհի երկարությամբ յուրաքանչյուր 1¹/₂—2 ժամ հեռավորության վրա կան ուղենիշներ (միլ), որոնք աշտարակի նման շինություններ են:

Ճամբորդը պետք է գնա այս ուղենիշների ուղղությամբ. եթե աջ կամ ձախ թեքվեց՝ ճամբան կկորցնի, որովհետև 1-2 մինարեի բարձրությամբ անդունդներ կան՝ որոնց սակայն քամին այնպես է լեցրել ավազով, որ խակի էլ հայտնի չեն: Եթե ձիու ոտքը մանի այս անդունդներից մեկի մեջ, դուրս գալն անհնարին է. քանի ձին չարչարվի՝ ոտքը այնքան կըխրվի ավազի մեջ: Ահա թե ինչու են այս աշտարակները շինել, որպեսզի ճամբորդը աջ կամ ձախ չթեքվի:

Այս «Ավազի ծով»-ից անցնող ճամբորդների և նրանց անասունների համար հատուկ դիմակներ են շինել, որը ծածկում է մինչև ականջները: Աչքի տեղերը «վարաք» կոչված ապակենման մի նյութից է շինված, որը պատրաստվում է ավազից:

Դիմակը Դիարպեքերի կարմիր կտորի

նման է: Այս դիմակից թե քեզ, թե ձեռք համար պարտավոր ես գնել: «Ավագի ծով»-ի երկու կողմումն էլ՝ թե Եզդու-ում թե Քիրմանում ծախում են:

Դիմակը՝ լինի մարգու կամ անասունի համար, այնպես է պատրաստված, որ թե քթի և թե բերնի համար լավ հարմարություն ունի և երբեք նեղություն չի առի: Թահմազ Ղուլիի բանակը այս «Ավագի ծով»-ից այնելիս, իրենց պատմելով՝ խիտ քամի է բարձրացել և 1000 քսակի¹⁾ արժողությամբ անասուն կորել է: Բոլորին չեն էլ փնտռել, վախենալով, որ անդունդների մեջ հանկարծ իրենք կարող են կորչել:

Չմոռանանք նշելու, որ և՛ թե ճամբորդը մինչև գիշերը չի կարողացել մի գյուղ հասնել, պետք է հենց ճանապարհի մեջտեղ էլ գիշերի (հակառակ դեքում կարող է շիթթվել) որովհետև այն սարը, որ երևոյան աջ կողմից էր տեսնում, առավոտյան տեսնում ես քամին տարել կիտել է ձախ կողմի: Ինչքան վատ (անհուսալի) կլինեք մարդու դրությունը, և՛ թե հիշյալ աշտարակները չլինեին, որովհետև քամին ամբողջ ավազը վերցնում և որտեղ որ մի լանջ կա, նրա առաջ կիտում է կղզու նման:

Այսքանը «Ավագի ծով»-ի համար բավական է:

Վ. Ա. Ռ. Ե. Ե. Կ. Ր. Ր. Գ.

Քիրմանից մեկնեցինք դեպի Սիստան, որը 10 հանգրվանի ճանապարհ է: Բայց Սիստան չհասած 3-4 հանգրվանի վրա մի ամբողջ երևաց: Գնացինք դեպի այն և այնտեղ տեսանք Չալ Օզլի Ռոստամի սերունդը, որին պատկանում է խանությունը: Թահմազ Ղուլին այստեղից անցնելիս էլ իր կողմից հաստատում է նրա խանությունը:

Այստեղ երեք օր մնացինք: Շատ պատիվ ու հարգանք ցույց տվեց: Ինքը (խանը) շատ լուրջ մի աղամարդ է՝ երկայնահասակ, ուսկրոտ, սև ունքերով, սև աչքերով: Այս տեսակ կազմվածքով և հասակով մարդիկ (ուրում էլինդե) Ռու-

¹⁾ Մի քսակը 500 դրուշ է = 500 կի — մոտ 43 սուրբի,

մելիում¹⁾ շատ կան, սակայն նրա աչքերի նման աչքեր չէի տեսել: Նրանք կովի աչքերից երեք անգամ ավելի մեծ էին: Թոքս չափազանցություն չհասկանաք, ընդհակառակը ավելի շուտ համեմատությունս ավելի փոքր վերցրի: Մանավանդ մի աղաներ 3 տարեկան, բայց 12 տարեկանի չափ էր. այս երեխայի աչքերը հոր աչքերից ավելի մեծ էին երևում, բայց այս երևույթը երեխայի տարիքի հատկություն եմ համարում:

Ինչպես ասացի, երեք օր այստեղ հյուրասիրվելուց հետո մեր ճանապարհը շարունակեցինք դեպի Սիստան:

Ճանապարհը այս կողմերում ամբողջ անապատ է: Պարսկերեն՝ «Կյորկի դիյաղան», թուրքերեն կարծեմ «կուլի դիյաղան» է ասվում:

Սիստանից մեկնեցինք դեպի Ղանտահար, 10 հանգրվանի ճանապարհ էլ այս է: Վերջապես հասանք Ղանտահար:

Թահմազ-Ղուլին մեծ հարգ ու պատիվ ցույց տվեց: Մեզ հետ էին Իրանի գլխավոր հրամանատար Աբտուլլահ էֆենդին և Մոսկով Սալեհ էֆենդին, որոնց ևս մեծ հարգ ու պատիվ տրվեց:

Իր տեղում ասել էինք, որ դեսպան Մուստաֆա փաշան նախապես Սուլթանի ախոռապետն էր: Թահմազ Ղուլին նրան փորձելու համար իր ունեցած ամենավատ բնավորության ձիուն ուզում է հեծցնել: Մի օր հրավիրում է իր մոտ և ասում. «Փաշա մի ձի ունեմ, բոլորովին չեմ հավանում, բերեմ հեծի և քո կարծիքը տուր»: Չին բերում են. թեև երկու կողմից երկու մարդ սանձը բռնել էին, դարձյալ ետևի թաների վրա էր բարձրանում, եկողին կծում, հետևն ացնողին քաջիով խփում, մոտ գնացողին առջևի ոտքերով հարվածում. այսպիսի վատ բնավորությամբ մի անասուն էր:

Մուստաֆա փաշան հասկացավ Թահմազ Ղուլու նպատակը. Աստված մեծապոր անի, Օսմանյան կառավարությունը, ձախողություն չի ցույց տա, նրա թշնամին թող բարեկամ դառնա: Պետության շահի

²⁾ Հարավային Բուրգարիան կոչվում էր «Ռուսելի»:

պաշտպան (դեսպան) լինելով հանդերձ, լավ էլ ձի հեծնող է եղել: Աստված խնայի, ինքն էլ բարձրահասակ, աննկատելի կամաց-կամաց մոտեցավ: Չին ծառս չեղավ: 2-3 քայլ էր մնացել, ձևի բերեց, մի սասյուն գործեց և խոկույն ոտքը գրեց ասպանդակին, նստեց: Չին էլ դարմացավ, թե ինչ պատահեց: Այն ցառկրտուն ձիուն կատու պարձրեց և իջավ: Թահմազ Ղուլին և իր մեծամեծները, բոլորն ակնդետ նայում էին թե՛ տեսնենք դեսպան փաշան ինչպես պիտի հեծնի այս ձիուն: Զարմանքով հետևում էին նրա բոլոր շարժումներին և երբ փաշան հաջողութեամբ իջավ ձիուց, բոլորն էլ հիացմունքով ասում էին: «Այսպես էլ ձի հեծնող լինի»: Ինքը Թահմազ Ղուլին ասաց. «Փաշա Աստված խնայի քեզ, Սուլթանի հացը հալալ լինի քեզ: Այս տեսարանը մենք մեր աչքով տեսանք և մենք էլ հպարտացանք, փառք Աստծո, որ Թահմազ Ղուլի մտածածին պես չեղավ:

Մի քանի օրից հետո մեծապատիվ Մուստաֆա փաշան իր գործերն ավարտելով՝ կրկնակի սրբավայր Ռուսի¹⁾ ճանապարհը բռնեց: Մենք մնացինք Թահմազ Ղուլի մոտ: Մեզ նվազածունների մեջ տեղ ավեցին: Թե քանի հողուց բաղկացած էր նվազախումբը իր տեղում կը հիշատակենք:

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԳ

Այստեղ, նախ և առաջ ձեզ պատմեմ այն մասին, թե Թահմազ Ղուլին ինչպիսի նենդութեամբ Ղանտահարը գրավեց:

Մինչև մեր Ղանտահար հասնելը, Թահմազ Ղուլին գրավել էր Բեյլսը և նրա շահին գերի էր բռնել, բայց այս մասին նորին մեծութուն Մուստաֆա փաշային ոչինչ չէր հայտնել:

Դեսպան Մուստաֆա փաշան մեկնելուց հետո, մի օր, այս գերի շահին իր ներկայութեան կանչեց (ես ինքս ներկա էի և տեսա), երիտասարդ մի մարդ էր, վայելուչ դեմքով, կարճ հասակով, կարմիր երեսով, հեան էլ մեծամեծները:

¹⁾ Ակնարկում է Պոլս:

Թահմազ Ղուլին ասաց. «Լսիր, դուք ամոթ-ամաչել չունի՞ք, որ ձեզ ենթակամի կամ երկու քաղաք ունենալով ձեզ թագավոր անվանում և հպարտանում եք: Բեյլսի շահը պատասխանեց.

— Ո՛վ շահ, մեզ ուզեցի անվանել են նրա համար, որ մեզնից յուրաքանչյուր ցեղ, իրարից անկախ, մի երկու քաղաքի վրա իշխում է: Հենց ուզեցի հատկանիշն էլ այս է»: Թահմազ Ղուլին ծիծաղեց և ասաց. «Լավ, լավ թագավոր ասածդ [ձեզ պես չլինիր] այն Հնդու թագավորը՝ թագավոր է. Ռուսի¹⁾ թագավորը՝ թագավոր է, Իրանի թագավորը՝ թագավոր է. ինչու եմ ասում. նրա համար, որ այս թագավորները շատ երկրներ ունեն և եթե թշնամին հարձակվելով մի քանի քաղաքներ գրավի, այնքան էլ մեծ ցավ չէ: Նահանգները շատ, քաղաքները շատ: Հիմա [հասկացար թե ում են ասում թագավոր], ձեր արածը ամոթ է, ամոթ—ասաց, անպատվեց ու հեռացրեց իր առաջից:

Թեև Ղանտահարի գրավումը պիտի պատմէի, բայց վերոգրյալը միտքս ընկավ [և որպես հետաքրքիր դեպք] պարտք համարեցի մեջբերում անել:

Ղանտահար ասածդ [դիրքը] մի մեծ լեռ է երկար նստվածքով, շատ բարձր և լերկ (ողորկ), ուղղահայաց ժայռերով այս լեռան կեսը դուրս թողած, մյուս կեսը բերդ են շինել, խկ բերդի պարիսպը [այնքան ընդարձակ, որ] վաթսուն հազար մարդ հազիվ կարող է պաշարել: Եթե զբոսից բերդի վերևը նայելու լինես, գլխարկդ (ներքև) վար կընկնի: Եթե մեջը ուռժք քցեն [բերդի մյուս թաղերում] երեխաները իրենց խողը կշարունակեն՝ այնքան որ հողերնին չէ [ապահով են]: Ահա այսպես մեծ և բարձր մի բերդ է:

Ժամանակին Զուբուլթ անունով մի շահ է լինում, այս շահը, մեղա ասածո, ինքնիրեն աստված հայտարարելու հավակնութուն է ունենում: Բոլոր անգին քաղաքը ծակել տալով, իր մորուքի ամեն մի մազից [մի հատ] կախել է տալիս, այնքան որ հարուստ է լինում. Զուբուլթ—Զուբուլթա շահ անունն էլ այս իրողութունից է մնացել:

¹⁾ Պոլս:

Ղանտահարում գծողք ու գրախա է շինել տալիս:

Ղանտահարցիների պատմելով՝ հենց այս Զուսթութ շահն է շինել տվել Ղանտահարը:

Ահա այսպես Ղանտահարը մի անմատչելի տեղ է, բայց Պարսկական շահերի տիրապետութեան ժամանակ Ղանտահարը՝ Ուրահզուշից մինչև Պիլեքեր, վրացական խաներին է հատկացվում. նույնիսկ Մուրվեյիզի ժամանակ էլ մի վրացի խանի ձեռքին է լինում:

Հիմա պիտի հարց տաք թե՛ շահնի որ Մուրվեյիզի ժամանակ էլ վրաց խանի ձեռքն է լինում, ապա Մուրվեյիզը մնաց է խլուժ նրա ձեռքից: Ահա թե ինչպես է խլուժում:

Մուրվեյիզի ժամանակվա վրացի բեկը մի ուտող-խմող մարդ է լինում, գնում է Ղանտահարի դուռերը, մի երկու օր ուտել-խմել, քեֆ անելուց հետո, դիշեր ժամանակ, շահերով դալիս մանում է Ղանտահար: Սրա քեֆ անելու մշտական ձևը այս է լինում:

Ղանտահարի նահանգի այն ժամանակվա ազգեցիկ բեկերից մեկն էլ Մուրվեյիզն է լինում: Սա տղվաններից շատերին իր կողմն է գրավում, խորհրդակցում են և որոշում այսպես՝ «վրացի խանը գիշերը, շահերով քեֆից վերադառնալիս հարձակվենք, սրի անցնենք ու Ղանտահարին տեր կանգնենք»: այս որոշումը միաբանութեամբ կատարել, բեկի մարդկանց բոլորին էլ կոտորել և վերջապես Ղանտահարին տիրել են:

Այս լուրը հասել է շահին, շահը զորք է ուղարկել Ղանտահար, բայց զորքի մի քանորդը չի մնացել, այնպես չոր ու ցամաք, ամառի, յետ ընկած, անապատներով ճանապարհներ, ուր կլիման վատ, ջուր չկա, ահա այսպիսի ճանապարհից անցնելով Ղանտահար հասած զորքին հասկանալի է ինչ է վիճակվում: Աղվանը շատվոր, իրա երկրում, իրենց աներից դուրս են գալիս կովում, եկող զորքին կոտորում: Ի՞նչ մի առանձին դեմք վարութուն կա այսպիսի կովում Աղվանի համար: Տարիներ շարունակ շահը զորք է ուղարկում, իսկ աղվանները կոտորում են: Շահը տեսնում է ճար չկա, Ղանտահարը գրավելուց հույսը կորում և հրաժարվում է:

Այնուհետև Մուրվեյիզը հեռոնեակ գորանում, Ղանտահարում խան է դառնում. վերջն էլ Շահի վրա է արշավում: Ահա այս է Մուրվեյիզի ուժեղացման պատճառը:

Քանք մեր հին պատմութեան թե թահմազ Ղուլին ինչպես գրավեց այս երկիրը (Ղանտահարը):

Թահմազ Ղուլին այս լեռան չորս բուրբ, մեկ թնդանոթի հեռավորութեան վրա փոսեր է փորել տալիս և այդ փոսերի մեջ, տեղ-տեղ, իրարից կես գնդակի հեռավորութեամբ աշտարակներ շինել տալիս և սրանց յուրաքանչյուրի մեջ 5—10 մարդ տեղավորում: Ահա այսպես շրջապատել էր Ղանտահարը:

Մեր պատմութեան ժամանակ Ղանտահարի խանը Հյուսեյին խանն էր, Մուրվեյիզի տղան:

Թահմազ Ղուլին, բերդից [պարսպից] դուրս գտնվող լեռան մեջտեղ ամենաբարձր մի կետում թնդանոթի դիրք պատրաստել տվեց և հազար ու մի շարձաբանքով թնդանոթը հանել տվեց այդ դիրքը: Այդ դիրքի տեղի ընտրութեան մասին հետևյալ բացատրութունը տվին՝ «Երբ Մուստաֆա փաշան այստեղ էր, Թահմազ Ղուլին նրան տարել է այդ լեռան վրա, որտեղից Մուստաֆա փաշան դիտել է Ղանտահարը և ասել է, որ այստեղից շուտ կառնվի այս բերդը, որովհետև միայն այստեղից կարելի է բերդը [պարսպը] ուժեղացնել, ուրիշ տեղից Ղանտահարը գրավել հնարավոր չէ»: Ահա այսպես ասին, մենք չենք լսել, բայց կարող է ասած լինի, որովհետև Մուստաֆա փաշայի գնալուց հետո է, որ Թահմազ Ղուլին սկսեց շինել տալ հիշյալ թնդանոթի դիրքը, սրանով էլ եզրակացրինք, որ ասվածը ճիշտ է, Մուստաֆա փաշայի ցուցումով է թնդանոթները այնտեղ հանել: Բացի դրանից մի ուրիշ անգամ Ղանտահարը այս տեղից է գրավվել: Այստեղ մի բուրջ կա որը «Դադա բուրջի» է կոչվում: Առաջին գրավման ժամանակ էլ ահա այս բուրջի կողմից են մտել:

Այս անգամ էլ նույն այս կողմից քակրան թնդանոթի հարվածներով բերդի [պարսպի] պատը քանդել: Քանդեցին և զինվորները որոշեցին հետևյալ օրը հարձակու-

մով ներս մտնել: Բայց լույսը բացվելուն, տեսան բերդի [պարսպի] քանդված մասը շինվել է պաշարվածների կողմից:

Միաժամանակ, այսպես՝ պարսիկները ցերեկը քանդելով, Դանտահարցիք գիշերը քանդվածքը շինելով՝ ճար չլտան ներս մըտնելու:

Քանձագ Դուրսին իր զորքին տրեխներ պատրաստել տվեց և (պատվիրեց) հրամայեց՝ «վաղը բերդում [պարսպում] թնդանոթի հարվածներից անցք բացվելուն պես, անմիջապես հարձակվեք և ներս խուժեք, մի անգամ ներս մտնելուց հետո հեշտ է գրավել»:

Քանձագ Դուրսի զորքը այս ծրագրով պատրաստվեց և սկսեց բերդը [պարսպը] ուժեղացնել: Մի կողմը քանդեցին և հարձակվեցին, բայց ազվանները նախապես ներսից պատրաստվել են՝ պարսպների վրա քարեր են շարել: Պարսից զորքը երբ բարձրանում էր այդ ձիգ լեռան կեսին, ազվանները պարսպից քարերը հաննաում էին, և որովհետև բարձրացած լանջը հող չէր որ քարը թաղվեր, այլ լեռկ ժայռ, քարը նետվելուն՝ երկու երեք մարդ սպանում և գլուխները ընկնելիս՝ հինգ-վեց մարդ էլ վերազրուում էր: Այսպես թէ այնպես, այդ օրը մինչև երեկո սպանվածներ և վիրավորներ տալով չկարողացան բերդը գրավել:

Քանձագ Դուրսին մտածեց նենգութամբ գրավել Դանտահարը:

Պատգամավորներ ուղարկեց Հուսեյին խանին, թե՛ թող գա ինձ տեսնելու, ես նրան շատ պատիվ-հարգանք կտամ: Ոչ մի վնաս չեմ տալու ոչ Հուսեյին խանին և ոչ էլ նրա մարդկանց: Գրութուն (բազամ) կտամ, կերդվեմ, որովհետև երկու մուսուլման իրար շարդեն վայել չէ: [Երկրորդ] Լսել եմ նաև, որ ձեր պատրաստութունն ու պաշարը շատ են, երեք չորս տարի կարող եք դիմանալ, բայց եթե կարծում եք, որ այդպես ներսը փակված մնալով ես կը թողեմ և կը հեռանամ, կը սխալվեք: Տասը

տարի կապանեմ այստեղ և մինչև չնվաճեմ չեմ հեռանա:

Պատգամավորները գնացին Հուսեյին խանի մոտ:

ԴԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԳ

Պատգամավորները գնացին Դանտահար, հայտնեցին Քանձագ Դուրս առաջարկները: Դանտահարցիք հավաքվելով առաջարկները քննում, երկու կարծիքի են բաժանվում: Մի մասը ընդունելի է գտնում առաջարկութունը, մյուս մասը՝ անընդունելի և վատ հեռանքներով լի: Բայց վերջապես ընդունում են պայմանով, «որ Քանձագ Դուրսին գրութուն (բազամ) գրի և իր կնիքով կնքի, որ մեզ ոչ մի վնաս չի տալու, միայն այս պայմանի կատարումով կզանք Քանձագ Դուրսին մոտ» — ասացին Դանտահարցիք պատգամավորներին:

Քանձագ Դուրսին պատգամավորներից լսելով Դանտահարցիների պահանջը՝ ասաց՝ «շատ լավ թող գրութուն գրվի գրեցին, ստորագրեց, կնքեց և այսպիսով վստահացրեց Հուսեյին խանին, որ իր կողմից ոչ մի վնաս չի հասցնելու ոչ անձամբ իրեն՝ Հուսեյին խանին, ոչ նրա խաներին, ոչ բեկերին և ոչ էլ բերդում գտնվողներից որևէ մեկին»:

Դանտահարցիք կարգացին և հավանութուն տալով հանձնվեցին, եկան Քանձագ Դուրսի մոտ (խաբը փայլինա):

Հետևյալ օրը, Քանձագ Դուրսին Հուսեյին խանին (զաֆտան) հազցրեց, գովից նրան — ասելով... ապրիս, ապրիս խան, գոհութուն աստուծո (բերեքեթիլլահ) [խելոք վարմունքիդ համար]: Պատվեց և խալաթներ հազցուց Հուսեյին խանի հազարապետներին, առաջարկեց քսան դուրուշ²⁾ ամսականով իրա մոտ ծառայության մանել: Նրանք էլ խորին շնորհակալութուն հայտնելով ավելացրին... «տեք իմ հողով-մարմնով քո ծառաներն ենք»:

Ահա այսպես Դանտահարը հանձնվեց: Մի քանի օրից հետո Քանձագ Դուրսին իր մոտ կանչելով Հուսեյին խանին, հայտնեց՝ մեր շահը [իր կողմից բանտարկված

¹⁾ Բնադրում գրված է պատվիրեց (թե՛նքի՛ն):

²⁾ Հարյուր դուրուշը — մի տաճկական ոսկի է

Թահմազ շահը՝ մի գրությամբ հետևյալ հրամանն է ուղարկել՝ «Լսել եմ, որ Մուրվեյիզի տղա Հյուսեյին խանը Ղանտահարը ձեզ հանձնել և ինքն էլ ձեզ մոտ է եկել, արդյոք ինչպիսի մարդ է, ցանկանում եմ նրան տեսնել»։ Թահմազ Ղուլին ավերացրեց՝ մեր շահի ցանկությունը կատարելու համար քեզ նրա մոտ եմ ուղարկելու։

Հյուսեյին խանը հարցրեց Թահմազ Ղուլիից — Տեր իմ, արդյոք շահը մեզ չի փրատելու։ Թահմազ Ղուլին պատասխանեց. «բարոյրովին մի վախեցիր քեզ ոչինչ փրատ չի անի», և մի քանի հայրուր զորքով Հյուսեյին խանին ուղարկեց Սեպիվար քաղաք՝ շահ Թահմազի մոտ։

Հյուսեյին խանին ուղարկելուց հետո, Թահմազ Ղուլին, հատուկ գրությամբ սուրհանդակ ուղարկեց շահ Թահմազին, ուր նրան գրում էր՝ «Ձեզ մոտ եմ ուղարկում Մուրվեյիզի տղա Հյուսեյինին, որի հայրը ավերել է քո երկիրը և սպանել քո հորն ու եղբարներին։ Ուղարկում եմ նրա համար, որ դու էլ քո հոր և եղբայրների վրեժը նրանից առնես»։

Շահ Թահմազը ստանալով Թահմազ Ղուլիի նամակը, կարգաց և ասաց. «Ինչ եմ անում Մուրվեյիզի տղա Հյուսեյինին, ինքն է ինձ բանտարկել, երկիրս առել, տեր ու տիրական դառել, մի գունդ անաստվածներին ինձ վրա պահակ կարգել, նեղություն են տալիս, խոսքս չեն լսում, բանտում եմ, ինքն էլ Մուրվեյիզի պես անսիրտ-անգութի (զալիմ-զալիմ) մեկն է։ Մուրվեյիզի տղան է ուղարկում ինձ, իբր թե մի հազվագյուտ նվեր է ուղարկում։ Եթե իմ բարին ցանկանում է, ինձ բանտից թող ազատի, շահությունը իրան լինի, ինձ մի կտոր տեղ հատկացնի, որպեսզի գնամ իմ ընտանիքով, երեխաներով մի կտոր չոր հաց ուտեմ, աստուծոն աղոթեմ և այս անաստվածների երեսը չտեսնեմ»։ Այսպիսի [բովանդակությամբ] պատասխան գրեց ու ուղարկեց Թահմազ Ղուլիին։

Թահմազ Ղուլիի ուղարկած սուրհանդակը գեո Թահմազ Ղուլիին չէր հասել [չէր վե-

րադարձել], Հյուսեյին խանը Թահմազ շահի մոտ հասավ։ Շահը հարցրեց և իմացավ, որ Թահմազ Ղուլիի ուղարկած մարդն է և առանց խոսելու, առանց մի բառ ասելու՝ դուրս վճռեց Հյուսեյին խանին իր մոտից։ Սառն էլ առանց մի խոսք ասելու դուրս եկավ։

Հյուսեյին խանին Թահմազ շահի մոտ ուղարկելիս, Թահմազ Ղուլին նախապես պատվիրել էր իր մարդկանց, որ եթե շահ Թահմազը չսպանի Հյուսեյինին, մի քանի ժամվա ժանապարհ հեռացնելով քաղաքից, (Սապղիվարից) իրանք սպանեն։ Եւ սպանեցին։

Դառնանք Ղանտահարի առնվելուն։

Թահմազ Ղուլին տասնը ութը ամիս պաշարելուց և նենգությամբ քաղաքը գրավելուց հետո, Ղանտահարի զիմացի դաշտում նոր Ղանտահար շինեց, հին քաղաքի բերդը, պարիսպը, տները քանդեց այնպես ավերակ դարձրեց, այնպես լերան լանջը մերկացրեց, որ կարծես այստեղ շինություն չի եղել։

Քաղաքի գույքն ու կայքը գրավեց, իսկ ժողովուրդը տեղափոխեց նոր քաղաք, տմեն մեկին հող հատկացրեց։ Նոր քաղաքի կարգ ու կանոնը հաստատելուց հետո իր զորքը քաշեց Հինգու վրա։

ԿՒՈՒԵ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԹԱՀՄԱԶ ՂՈՒԼԻ ԴԵՊԻ ՀԻՆԴ ԱՐՇԱՎԵԼՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես պատմեցինք, Թահմազ Ղուլին Ղանտահարը գրավելուց, նոր Ղանտահարի կարգ կանոնը հաստատելուց հետո, դեպի Հինգ ճանապարհվեց։

Առաջինը՝ զորքը քաշեց Քելաթ անուսով երկրի [քաղաքի] վրա։

Եթե Քերքյուք քաղաքը տեսել էք, այս Քելաթ քաղաքի դիրքը ճիշտ նրա նման է, շինված՝ մի լերան գագաթին, կամ Քերքյուքն ես տեսել կամ Քելաթը։ Տասը հազար սղվան ընակիչ ունի։

Թահմազ Ղուլիի գեո պատերազմից,

գնդակը¹⁾ սպառվեց, սկսեցին սրով կռվել, սրերը կտոր կտոր եղան, հրացանների կոթերով սկսեցին կռվել, հրացանի կոթերն ալ ջարդվեցին, սկսեցին քարերով կռվել, ոչ ոք կռվից չխուսափեց, մինչև բոլորը ուժաստատ ընկան, և այս տասը հազար ազգանից ոչ ոք չփախավ և ոչ ոք գերի չընկավ, բոլորը կոտորվեցին, բայց զըզըրբաշները (պարսիկները) շատ զոհ տվեցին: Քահմազ Ղուլին Քելաթի բերդը քանդեց, այնպես հասկացեք, որ հողի հետ հավասարեցրեց: Կոտորվող տասը հազար ազգան գորգից մեկի գանգը չափեցի երկու թղաչափ եր:

Քահմազ Ղուլին այս տեղից առաջացավ դեպի Մահմուտի Ղաղնի: Սրանք չընդդիմացան և անմիջապես հանձնվեցին: Քահմազ Ղուլին այցելեց Մահմուդ Ղաղնիի դամբարանն ու այստեղից ել առաջանալով հասավ Քապուլ և պաշարեց:

Քապուլում ոչ ոք Քահմազ Ղուլին չընդառաջեց, 7—8 օր անցավ, ձայն ձուռն չկա: Քահմազ Ղուլին կասկածեց, չլինի քապուլցիները մի խորամանկութուն են մտածում իրան դեմ, նրանք ներսն են, իսկ ինքը դուրսը:

Քապուլի առաջը այգիներ են՝ շատ խիտ ծառերով, հովասուն, այնպես քեֆի (զվարթացուցիչ) տեղեր, որ այս ծառերից քաղաքը բոլորովին անտեսանելի է:

Քահմազ Ղուլին սկսեց ծառերը կտրել տալ: Այգիներն ու ծառերը կտրել տալուց հետո բանակատեղից բերդի [պարսպի] մի մասը երևաց: Մի քանի տներ կային բերդի ճանապարհին, վառեցին՝ քար ու քանդ արին: Ներսից լուր եկավ, որ հետևյալ առավոտ կռիվ են տալու, չորս հայրուր միլիթանիներ [խլամության աղանգավոր?] քանը հինգական դահեկանի սրամարտիկ են գրվել: Քահմազ Ղուլին ևս պատրաստվեց:

Հետևյալ օրը բերդի [պարսպի] դռները բացվեցին, միլիթանիները հաշիշով օշարակը խմած՝ վահանը ձեռներին, մերկ սրերով, հետիոտն դուրս եկան: Քահմազ Ղուլիի զորքը ձիավոր, նրանք հետիոտն:

Քահմազ Ղուլին ևս փախչելու հրաման արձակեց: Չորքը ևս նահանջեց: Այս չորս հարյուր միլիթանիները հետապնդեցին Քահմազ Ղուլիի զորքերին, որոնք նահանջեցին այնքան, որ այս հիմար հարբածներին դուրս քաշեցին ծառերի, այգիների սահմանից, հասցրին մինչև հարթավայր: Քահմազ Ղուլին հարձակման հրաման տվեց: Նահանջողները միլիթանիներին շրջապատեցին—բռնեցին, հավաքեցին: Նույնիսկ իմ աշակերտներիցս մեկը, որ դիտելու էր գնացել, երկու հողի վերցնելով մեր վրանը բերեց, խոսեցինք և քաղաքի մասին էլ տեղեկութուններ վերցրինք:

Վերջի վերջո, առանց մեկի քիթն արնոտելու, քաղաքը հանձնվեց Քահմազ Ղուլին՝ քաղաքագլխի միջոցով, խանը չկար, փախել էր: Քահմազ Ղուլիի հարցին թի՛ «ո՞ւր է այս քաղաքի խանը»՝ քապուլցիք պատասխանեցին. «Տեր իմ, Չալալբաթ փախավ»:

Քահմազ Ղուլին յոթն հոգուց բաղկացած պատգամավորութուն ուղարկեց Չալալբաթ՝ Քապուլի խանին, որ զա հանձնվի, բայց նա պատգամավորներից վեցը սպանեց՝ յոթերորդի քիթն ու ախանջները կտրելով՝ ևս ուղարկեց:

Քահմազ Ղուլին սրանեղած բանակը քաշեց Չալալբաթի վրա, բայց խանին այնտեղ չգտավ: Բարկանալով՝ քաղաքի մինչև կատուններն ու շները սրի քաշեց և քաղաքն էլ հրկիզեց, մոխիր դարձուց այնպես, որ կարծես ոչ մի շինութուն չի եղել այստեղ: Անցնող-դարձողները որևէ մի բանից չէին կարող եղբակացնել, որ այստեղ Չալալբաթ քաղաքն է եղել:

Բայց ձեզ զարմանալի մի բան պատմեմ: Քապուլ քաղաքում տասնը վեց հատ թնդանոթ կար, որոնց կանկ-թեմուրն էր ձուլել տվել. տասնը վեցն էլ այնպես գեղեցիկ, այնպես համաչափ, այնպես բարեձև՝ կարծեք նոր էին ձուլվել. մենք ամեն օր դիտելու էինք գնում, ամեն մեկի երկարութունը տասնը հինգ-տասնը վեց արշին [10—11 մետր], բոլորի վրա ուռմի՛ լեզվով փորագրութուններ կային: Քապուլցիք շատ են

¹⁾ Այդ դարում փողից լեցվող հրացաններ էին կապարե գնդակով:

²⁾ Լատիներեն կամ հունարեն:

աշխատել այս թնդանոթներից մեկը բեր-
դի գլուխը հանել թահմազ Ղուլիի զինվոր-
ներին ահաբեկելու¹), բայց չեն կարողացել:
Թահմազ Ղուլին ուզեց այս թնդանոթները
Պարսկաստան տանել, բայց նա էլ չկարո-
ղացավ և որովհետև ավելի ևս առաջ պի-
տի դնար, քապույցիների մոտ այս թնդա-
նոթները թողնել չուզեց, վախենալով, որ
իր հետևից կարող է խփեն, ուստի, ճարա-
հատյալ կտոր կտոր արեց այդ զարմանալի
թնդանոթները և փոքր թնդանոթներ ձու-
լիլ տվեց:

Ջալալապատ քաղաքը (ինչպես վերև
պատմել էինք) հողի հավասարեցնելուց հե-
տո, Թահմազ Ղուլին զորքը շարժեց դեպի
Խայբեր կիրճը: Այս կիրճի մի ծայրից-մյուս-
ը քսանը չորս ժամ է քաշում: Կիրճի
մյուս ծայրում՝ Փեշավար քաղաքի նասըր
խանը իր զորքով դիրք բռնել, սպասում էր:

Թահմազ Ղուլին կիրճի այս կողմում
մտածում էր, թե արդյոք մնց կարող է
անցնել, տեղ կա, որ հաղթվ մի ձի կարող
է անցնել, տեղ կա՝ տասը ձի: [Այդ միջոցին՝
մի լրտես եկավ, և հայտնեց Թահմազ Ղուլիին
թե՝ «Շահա, ձեզ անցնելու մի ճանապարհ
կա, բայց դժվարանցանելի է, միայն ոտքով
մարդը [հետևակը] կարող է դնալ, ձիով ան-
կարելի է»: Թահմազ Ղուլին հետաքրքրվեց,
թե ուր է տանում այդ ճանապարհը: Լրտե-
սը թե՝ նասըր խանի դիրք բռնած կետից
մեկ և կես-երկու ժամ ավելի ներս:

Թահմազ Ղուլին արեխներ կարել տվեց,
ցորենը բովել տվեց, ձիերն ալ քաշելով՝
զորքի մի մասը հետն առավ ու լրտեսի
ցույց տված ճանապարհով առաջացավ:

Առավոտյան դեռ լույսը բացվելուն եր-
կու ժամ մնացած՝ դուրս եկան մի հարթա-
վար, որ նասըր խանի կիրճի ծայրում
բռնած դիրքից մեկ-երկու ժամով էլ դեպի
ներս էր:

Իսկ նասըր խանը, կիրճի ծայրում, հան-
դիստ քնի մեջ էր: Կարծելով, թե Թահմազ
Ղուլիի համար այդ անմատչելի ճանապար-
հով [լրտեսի ցույց տվածով] անցնելն ան-
կարելի է, նասըր խանի զորքն առոք փա-
սոք հանվել, հանդիստ քնել էր:

¹ Բնադրում խրտնեցնելու (խրքիւթմեք):

Թահմազ Ղուլին իր հետ տարած զոր-
քին պատվիրեց, որ թէ՛ հիմի հերոսներ,
օրն այս օր է, եթե ընկճվեցինք, ոչ մեկս
ողջ չի մնա: Աղոթեցին և հեծան ձիերը:

Կիրճի ծայրում նասըր խանը դեռ քնի
մեջ էր:

Թահմազ Ղուլին վրա տվեց և նասըր
խանին էլ վերապորեց. երեք բլուր մար-
դու գանգ հավաքել տվեց: Կիրճը բանալով
լուր ուղարկեց, որ բանակն անցնի: Ես,
ձեր ծառա Թամբուրի փոքրիկ (քյուչուք)
Արուժինն էլ այդ բանակի հետն էի: Հա-
սանք կիրճի մեջ տեղը, քնեցինք. ինչպես
վերև հիշել էի, կիրճի մեկ ծայրից մյուսը
քսանը չորս ժամվա ճանապարհ է, մի օրում
չէինք կարող անցնել: Հետևյալ օրը երե-
կոյան դեմ դուրս եկանք կիրճից, տեսանք
Չարդել, կոտորել, երեք բլուր գանգ են հա-
վաքել:

Երեք օր հետո Թահմազ Ղուլին դիվան
կազմեց և իր ներկայության կանչելով նա-
սըր խանին՝ ասաց. «Թահմազ Ղուլին կիրճը
լավ բացավ, խան»:

Խանը պատասխանեց. «Ձե՛ շահ, արխու-
թյամբ չբացիր, այլ խարդախությամբ»:

Թահմազ Ղուլին ասաց. «Ճիշտ ասացիք
խան, բայց այս այնպիսի մի կիրճ է, որ
միայն մի անգամ մեծ մարդար է Ալին
(հազրեթի Ալի) հաղթահարել է: Բայց
տղամարդության իննը մասը խարդա-
խություն է, միայն մեկը արխություն,
առանց խարդախության քաջություն չի
լինի» — ավելացրեց Թահմազ Ղուլին:

Ինչպես վերև հիշեցինք՝ նասըր խանը
վերապորվել էր: Թահմազ Ղուլին վերաբուժ-
բերել տվեց, հարգանք-պատիվ ցույց տվեց,
մուշտակ հազրուց և նորից Փեշավար քա-
ղաքի խան կարգեց:

Մեծ քաղաք եր Փեշավարը և Թահմազ
Ղուլին բավական ժամանակ մնաց: [Այդ
միջոցին] Աթալի դեսալիին մարդիկ հատ-
կացրեց, ջիսերներ (լաստ) կապել տվեց:

Աթալի դեսալիը անցանք, այնտեղից մի
քանի քաղաքներ էլ մտանք, բայց անուն-
ները մոռացել եմ:

Ջեյուն կոչվող մեծ գետը հասանք, որը
անցնում է (Քիշմիրէ աքար) Քիշմիրի կող-
քով, լայնքը Պոլսո Բախչե-Գարուից մինչև

Ղալաթա [սսկեղջյուր] կլիներ: Դեռ մենք Քիշմիրից մի քանի օրվա հեռավորութիւն ունեցինք, Քահմազ Ղուլին (Թոմարներ) նստիւր, (Ղիսերներ) շինել ավելց և մենք Ջեյհուն գետը այնպես անցանք:

Ջեյհուն գետը անցնելուց հետո Լահոր հասանք: Այս Լահորի խանի մի արարքը պատմեմ, բայց դարմանալի մի վարմունք է: Դեռ մեր առաջապահը Լահոր չհասած, — իսկ մեր առաջապահը ով էր գիտէք, Հաճը խանն էր, — Լահորի Բահատուր խանը քաղաքի և գյուղերի իր ցեղակիցներին լուր է ուղարկում, թե՛ թշնամին գալիս է, արեք քաղաք մտեք որպեսզի չվնասուինք: Այս հրամանին ոմանք ենթարկվել զնացել են, ոմանք չեն զնացել: մինչ այդ Հաճը խանը հասնում է չգնացողներին, որոնք դիմադրում են, բայց Հաճը խանը մի քանիսին կոտորում է:

Այս միջոցին մի քանի է գալիս Քահմազ Ղուլիի մոտ և ասում. «Իմացած եղիր Շահա, սրան Բահատուր խան են ասում, յոթանասուն-ութանասուն հազար ձիավորով է դուրս գալիս, սա Հինդու մեջ հռչակ ունի»:

Քահմազ Ղուլին պատասխանում է. «Աստված ողորմած է, աստված կամ մեզ կտա (հաջողութիւնը), կամ նրան»:

Ամբողջ բանակով Լահորի դեմ զնացինք, վրանները խփեցինք նստեցինք: Նրանք էլ բերդի դռները փակել ներսը նստել են:

Երեք օր սպասեցինք: Չորրորդ օրը Բահատուր խանը մի քանի պատգամավոր ուղարկեց, որոնք հայտնում են, թե, — Բահատուր խանը ցանկանում է Շահի [Քահմազ Ղուլիի] հետ տեսակցել: Քահմազ Ղուլին պատրաստակամութիւն է հայտնում:

Հաջորդ օրը Բահատուր խանը 80 հազար ձիավորով դուրս եկավ [բերդից], ասացին Բահատուր խանը՝ գալիս է: Քահմազ Ղուլին թե՛ թող գա, արդելք չկա:

Բախչէ Գափուից Մամաթիա հեռավորութիւն վրա (մոտ երկու-երեք կիլոմետր) դորքը թողեց, իսկ ինքը Բահատուր խանը երեք ձիավորով առաջացավ դեպի Քահմազ Ղուլին. մի զնդակի հեռավորութիւն վրա ձիուց իջավ, այդ երեք ձիավորներին էլ այնտեղ թողեց և ինքը գեանիվեր բարև ատելով հասավ Քահմազ Ղուլիին: Քահմազ

Ղուլին նրան ընդունեց՝ «հրամեցե՛ք» ասելով, իսկ Բահատուր խանը նրան պատասխանեց «Շահա» բացականչութիւնով:

Տեսակութիւն միջոցին Քահմազ Ղուլին Բահատուր խանին հարց է տալիս. «Քան, քո մասին ինձ հայտնեցին, թե քաջ սղաժարդ է, կովոյ և դորքն էլ շատ, հապա ինչո՞ւ չկովեցիր»:

Բահատուր խանը պատասխանում է. «Ճիշտ ես ասում, Շահա, միայն պատերազմ չանելուս պատճառը հետևյալն է՝ Մենք երեք կորայր էինք, մեր հայրն էլ խան էր, շատ դիտուն և բանիմաց մարդ, մենք երեք կորայրներս էլ երիտասարդ էինք: Հայրս ամեն օր և ամեն ժամ մեզ խրատում և ասում էր. «Երանի կողմից մի տղամարդ պիտի երևան գա, տղաներս, ես կմեռնեմ, դուք ողջ կմնաք, եթե այդ տղամարդը ձեր ժամանակ երևան գա, նրան չդիմադրեք, կվնասվեք, եթե հարգեք, նա էլ ձեզ կհարդի ու կը պատվէ»: Հայրս միշտ խոսում էր այս մասին: Հիմա մեր շահը որ երևան եկավ, ես մտածեցի, արդյոք հորս խրատին հետևեմ թե ոչ: Վերջի վերջո ես կորակացրի՝ «Հոր խոսքը լսելը լավ է. հոր խրատին հետևողը փաստով դուրս չի եկել»: Ահա թե ինչու չպատերազմեցի, Շահա»:

Քահմազ Ղուլին «մաշալլահ» բացականչութիւնով գովեց Բահատուր խանին և ավելացրեց. «Աստված լուսավորե ձեր հոր հոգին, շատ իմաստուն և բանիմաց մարդ է եղել, ճիշտ որ ձեր հոր գուշակած տղամարդը ես եմ»:

Քահմազ Ղուլին խալաթ է հաղցնում Բահատուր խանին և ասում է. «քեզանից ոչ նվեր եմ ուզում, ոչ էլ քո ունեցվածքից մի քանի կարիք ունեմ. ես ավելի առաջ պիտի գնամ, դու միայն պաշար հասցուր ինձ»:

«Դիլիս վրա Շահա» — պատասխանում է Բահատուր խանը:

Ահա այս է Բահատուր խանի վարմունքի մասին լսածս, ճիշտ է թե ոչ, համենայն դեպս շատ լավ արեց, առանց մի կաթիլ այրուն թափելու ապահովութիւն ստացավ և քաղաքի խանութիւնն ալ էլի իրան արվեց:

Քահմազ Ղուլին մունետիկ կանչել ավելց

իր զորքի մեջ՝ «Վայ այն մարդուն, որ Լահոր քաղաքը գնալուն մի կողմիցի ֆլաս կամ թալանչություն կանի: Ով ուզում է բանակից կարող է քաղաք գնալ՝ առևտուր անել, իսկ քաղաքից էլ ով ուզում է կարող է բանակ դալ՝ և առևտուր անել»:

Նս, նվաստ (Փաղիբ), փոքրիկ Արուսիկնս, բանակի շուկայում ման գալիս, հանկարծ սրերի ձայն, խառնաշփոթություն փրթալ, տեսա Լահորի մարդկանց սուր են քաշում: Թահմազ Ղուլին հրամայում է կարգապահության պետին՝ բոլորին բռնել բերել, նա էլ մոտ չորս հայրուր հողի բռնում բերում է Թահմազ Ղուլիի առաջը:

Թահմազ Ղուլին հրամայում է տանել բոլորին էլ գլխատել. իսկ երբ կարգապահության պետը հայտնում է, թե՛ «Շահ, մեղավոր անմեղ բոլորին բռնել բերել եմ» — Թահմազ Ղուլին ավելացում է, «տար մեղավորին սպանիր, անմեղին բաց թող»: Կարգապահության պետը տանում մեղավորին սպանում, անմեղին բաց է թողնում և բանակի մեջ կարգը հաստատվում է:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Լահորից հետո Թահմազ Ղուլին ավելի առաջացավ դեպի Ճիհանապատ:

Լրտեսը տեղեկացրեց, որ.— Շահ, Մեհեմետ շահն իր ամբողջ զորքով Ճիհանապատից դուրս եկավ գիմաղբերու:

Թահմազ Ղուլին հասավ Սերի հինու: Մի քանի քաղաքներ էլ մտանք, բայց անունները խրթին լինելուն մտքումս չեն մնացել:

Սերիհինան անցանք և Թահմազ Ղուլին մտեցավ Մեհեմետ շահին: Մեհեմետ շահը Ճիհանապատից 6—7 հանգրվանի ճանապարհ առաջ էր եկել, զիրքեր բռնել, թնդանոթները տեղավորել, խրամներ փորել, բերդեր ու աշտարակներ շինել տվել:

Թահմազ Ղուլին իր ամբողջ բանակով հեռվից շրջապատւյա կատարելով՝ Մեհեմետ շահի ետևն անցավ: Օրինակ. ասենք թե Ճիհանապատը կտիրեն լինի և Մեհեմետ շահն իր բանակով դիրք է բռնել Ստամբուլում, իսկ Թահմազ Ղուլին գալիս է Իզմիրի վրայով. պետք էր սպասել, որ Սկյուտար կհամար և այստեղ տեղի կունենա պատերազմը: Բայց այդպես չեղավ. Թահմազ Ղուլին

լին իր բանակը առաջնորդեց «կղզի»-ների վրայով դեպի Քյուչուք չեքմեճև և այստեղ դիրք բռնեց:

Իիրքերը այնպես էին դասավորվել, որ Թահմազ Ղուլին ավելի մոտ էր Ճիհանապատին և կարծես Թահմազ Ղուլին լինեք Ճիհանապատից թշնամու դեմ կովելու դուրս եկողը, իսկ Մեհեմետ շահը օտար, հեռու տեղից եկած և հարձակվող: Այսպես ուրեմն Թահմազ Ղուլին Ճիհանապատի (մայրաքաղաքի) և նրա թագավոր Մեհեմետ շահի բանակատեղի արանքում դիրք էր բռնել, այնպես որ Մեհեմետ շահը իր մայրաքաղաքից հեռու էր մնացել:

Կարող եք հարց տալ թե՛ հապա մնց այդպես շուրջանց կատարեց, ասեմ. «այդ երկիրն իմ բերած օրինակի նման մի կողմը ծով և մի կողմը ցամաք չէ. լայն ու ընդարձակ մի հարթավայր է, որտեղ երկինքը կարծես մի պնակի կափարիչը լինի այնպես հավասար ծածկած է երևում: Թահմազ Ղուլին ուղիղ թշնամու վրա չզնաց այլ կողքանց անցավ նրա թիկունքը. թե մենք, թե նրանք իրար տեսնում էինք»:

Պետք էր սպասել, որ Մեհեմետ շահը պիտի գիմաղբեր, պիտի թույլ չտար իր թիկունքն անցնել, բայց տեղից անգամ չըշարժվեց: Երևի Մեհեմետ շահը մտածեց՝ Թահմազ Ղուլիի զորքերը թող տեղավորվեն, հետո դրանց երկու կրակի մեջ առնելով, (միաժամանակ հարձակում իր զիրքերից և իր մայրաքաղաք Ճիհանապատից) կոչընչացնեմ: Այդպես էլ սկսեց, միայն թե Թահմազ Ղուլին այդ մասին էլ մտածել էր:

Թե՛ Ճիհանապատից հարձակվողներին մասամբ ոչնչացնում, մասամբ փախցնում էր և թե Մեհեմետ շահի հետ կովում:

Անշուշտ հետաքրքիր է Թահմազ Ղուլիի բանակի քանակի մասին մի երկու խոսք տեսլը: Այսպես, նրա ոտձիկ ստացող մասը՝ երեսուներ հինգ հազար էր, իսկ ամբողջ բանակում՝ երեք հարյուր հազար մարդ կար: Բանակից դուրս գալ հնարավոր չէր, մինչև որ Թահմազ Ղուլիից համապատասխան թույլատվություն չլիներ: Իսկ փախչել, նորից հնարավոր չէր. անա թե՛ ինչու, առաջուց գնում են շարքաշները, իսկ բանակի երկու, երեք կամ չորս ժամ ետևից

«ըրողներ»-ն էին գալիս: Նույն բանն էր և աջ և ձախ կողմերում: Եթե այդ մարդկանց ձեռքն ընկար, անպայման պիտի բերեն թանձարը Ղուլի մոտ, իսկ նրա վճիռը իհարկե պարզ էր:

Մի հետաքրքիր երևույթ՝ ամբողջ բանակում հիսուն հազար կանայք կային. է՛, հիմա պիտի հարց սաք, թե բանակում ի՞նչ կարիք կա հիսուն հազար կնոջ. այսպես՝ որք պտռնիկ է սիրել իր երկրում և հետը բերել, մի ուրիշը իր կինը, երբորդը՝ սրպես սպասուհի, վերջապես կային մարդիկ, որ երկու-երեք կին ունեին:

Թանձարը Ղուլին երբ զինվորի կարիք ունենար, դիմում էր հետևյալ խորամանկութեան՝ այդ հիսուն հազար կանանց օրգամարդու հագուստ էր հազցնում, դիմում և ձիերի վրա նստեցրած նոսր շարքերով իր բանակի հետևի մասում պահում, իտարելու թշնամուն թե՛ դեռևս ահագին զինվոր ունի պահեստում:

Արևը մայր մտնելուն շորս ժամ էր մնում, երբ Մեհեմետ շահի հետ պատերազմն ըսկըսեց: Մինչև իրիկվա մթնաշաղը տեղի ունեցած այս պատերազմը սոսկալի էր, այնքան որ թանձարը Ղուլի քիթն ու բերանը հողոտված էին: Թշնամին տեղի չէր տալիս, լավ էր դիմադրում, մի բան, որին թանձարը Ղուլին չէր սպասում:

Մեհեմետ շահի զինվորները պատերազմի փորձ չուներին. մինչդեռ թանձարը Ղուլին և իր զինվորները, պարզ է, այսքան մամանակ Օսմանյիների, Թուսաների և այլ թշնամիների դեմ մղված կռիվներում կռվել էին: Այս բոլորը նկատի առնելով, իսկապես զարմանալի և անհուսալի էր Հընդկացիների այսպիսի ուժեղ դիմադրությունը: Ապրին (աֆերիմ) հնդկացիները:

Իրիկվա մութն իջել էր: Հնդկացիների գորահրամանատարին (որի անունը Սաատեթ խան էր) գերի էին բռներ Երկու կողմերն էլ ևս քաշվեցին: Սաատեթ խանին բերին բանակատեղի:

Հետևյալ առավոտ արշալույսին թանձարը Ղուլին հրամայում է իր մոտ բերել Սաատեթ խանին: Հարցնում է նրան հընդկացիների զինվորների, ռազմամթերքի և այլ բաների մասին: Սաատեթ խանը պա-

տասխանում է. «զինվոր էլ շատ ունենք, ռազմամթերք էլ պարեն էլ. ամեն բան էլ ունենք»:

Թանձարը Ղուլին համողվում է, որ եթե մի անգամ էլ սրանց հետ պատերազմի բռնվի, իր սարսաթյունը անխուսափելի է, որովհետև մասնում է. «քանի որ այս հնդկացիները դեռևս պատերազմի փորձ չուներին, արյան հոտին վարժված չլինելով, նիհար ու կանացի բնավորության տեր՝ շորս ժամ որ սուսերամարտի դիմադրեցին, հապա եթե մի քանի օր պատերազմել սովորեն իմ նմուշը չեն թողնի»:

Ու սկսում է խորամանկութուն մտածել:

Իմնելով Սաատեթ խանին՝ թանձարը Ղուլին ասում է. «Մեհեմետ շահը իմ եղբայրս է, ես եկել եմ նրա հետ տեսութեան, հյուր չի ընդունի»: Սաատեթ խանը չի պատասխանում: Թանձարը Ղուլին ավելացնում է. «Գրիբ Մեհեմետ շահ եղբորս, որ ես նրա հետ տեսութեան եմ եկել, բարեկամութեան եմ եկել և ոչ թե թշնամութեան. վերջապես ինչպես կուզես գրիբ՝ միայն թե էլ կռիվ անել չտաս»:

Սաատեթ խանն էլ իր շահին ինչ է պարում-չի պարում, նամակն ուղարկում է: Մեհեմետ շահը այս նամակը ստանալով՝ կարգում և պատասխանում է. «Թանձարը Ղուլին մտափորապես երկու հարյուր հազար մարդ ունի. աշխարհում ձրտեղ տեսնվել է այսպիսի հյուր»:

Թանձարը Ղուլին նորից իր մոտ է կանչում Սաատեթ խանին և ասում. «տե՛ս, խան, այս գործը դու հաջողացրիր, լավ, թե ոչ ինքզինքդ մեռած համարիր. ես այստեղ ես գառնալու չեմ եկել. մեռնելու եմ եկել (—ես կը մեռնեմ, բայց չեմ դառնա)»:

Սաատեթ խանն ինչ անի, հողին անուշ է, ինչ պարում է չի պարում իր շահին և ահա Մեհեմետ շահից պատասխան է գալիս, թե՛ «վաղը գալու եմ»: Այսպիսի գրական պատասխանը բացատրվում է նրանով, որ Մեհեմետ շահը շատ սիրելիս է լինում Սաատեթ խանին, հավատացած է լինում, որ նա անընդունակ է ստելու, մանավանդ, որ Սաատեթ խանը տոհմիկ և գործունյա, հնդկական ահագին նահանգներ նրան վա-

տահված, հնդկացիների մեջ հաճախ պատահած կռիվներում ղեկավար, և ամեն մի գործ հաջողութեամբ լուծող (երեսը սպիտակ հանող)։ Ահա Սաատեթ խանին այսպիսի հավատ ընծայված լինելուն, վստահում և «վաղը գալու իմ» պատասխանը ուղարկում է։

Մեհեմետ շահի վեզիրը՝ (նախարարպետ) Քամերաի խան, կարգապահութեան պետը, ամբողջ նախարարները, մեծամեծները, գիտունները, մեծ ու փոքր բոլորը ասել են. «Տեր իմ, ինչ բանի պակասութուն ունեք, որ վաղը գնալու մասին ձեր կամքն եք հայտնում։ Փառք աստուծո ամեն բան ունենք, թե դինվոր, թե ռազմավոր, թե պարեն, թե թնդանոթ. մեր գանձարանն էլ լիքն է։ Եթե զինվորի պակաս եք զգում, հրամայեցեք թող զինվոր հավաքվի։ Եթե ուրիշ թշնամիներ էլ ունեք, լուր ուղարկեցեք մեր հարևաններին բարեկամութեամբ աջակիսի օրվա համար է. չէ՞ որ մենք նրանց կողքին միշտ էլ կուզել ենք, թող հիմա էլ նրանք գան մեզ օգնեն. օտար երկրներից հայտնված այս թշնամուն դուրս մղենք, ազատենք մեր գավառները և նորից մեր բարեկամութեամբ բարեկամութեամբ կլինի (կամրապնդվի)։ Ահա այսպիսի բովանդակությամբ զրեցեք մեր բարեկամ հարևաններին։ Այսպիսի միջոցներով, առաջ աստված, այդ թահմազ Դուլի կոչեցեալի բուրդը կը գզենք և դուրս կը վաճառենք։

Այս խորհուրդների վրա Մեհեմետ շահը նորից նամակ է գրում թահմազ Դուլիին թե. «ես քո ոտին չեմ գալու, պատերազմ ունեմ, պատրաստ եղիր [մահվան]»։

Թահմազ Դուլին նորից է կանչում Սաատեթ խանին և ասում «վաղը, նախքան պատերազմ սկսելը քեզ կզլխատեմ ու նոր միայն պատերազմ կգնամ» և խիստ նեղանալով, հանդիմանում ու դուրս է վըննտում։

Սաատեթ խանը համոզվում է, որ պիտի սպանվի, ինչ անում է չի անում Մեհեմետ շահի սիրտը շահում ու բերել է տալիս թահմազ Դուլիի մոտ։

Գ. ԱՌԻՆ ԵՌԹԵՐՈՐԳ.

Երբոր Մեհեմետ շահի գալուստի մասին թահմազ Դուլին լուր է ստանում, կարգադրում է հատուկ բնակարան պատրաստել և ինքն էլ ծունկը ծունկի վրա, մեջքով կրթնած՝ նստում։

Մեհեմետ շահը գալիս է ասացին. մենք էլ ցանկացանք տեսնել, թե ինչով է գալու. ձիով, թե հեախոտն, բայց նա գալիս էր ոչ ձիով, ոչ հեախոտն, և ոչ էլ թահալը բեկանով¹⁾։

Նստած գահը՝ ազնվականների կամ թե մեծամեծների (Պոլսո) երկտեղանի մակույկների նման մի բան էր։ Քամակի կողմում փղոսկրանման ճյուղեր քաշված, կամ փղոսկրե թևակալների (տրաբեղ) նման, շինված տախտակից և վերև նկարազրվածի պես շուրջը չորս մատ լայնքով նուրբ փղոսկրյա թևակալներով պատրաստված, ինքն էլ մեջը բաղձած, ծանր-ծանր, վեց մարդ²⁾ կտեից և վեց մարդ առաջից, սպիտակներ հողած գալիս էին ուսերի վրա բարձրացրած. կարծես դազող տանելիս լինեին։ Ինքն էլ վրան նստած նարգիլե էր քաշում, որի սարքը ներքևում բռնած պահում էր մի հետևող։

Ահա այսպես մոտեցավ Մեհեմետ շահը։ Իջավ և հինգ-աստը քայլ քայլելուց հետո՝ «Եմ շահ» զոչեց։

Թահմազ Դուլին ցատկեց ելավ իր սենյակից մոտեցավ ու, փաթաթվեցին, համբուրվեցին և ձեռք-ձեռքի տված թահմազ Դուլին առաջնորդեց իր սենյակը։

Սկսան գրույց։ Ծաշի ժամանակ եղավ ճաշեցին։ Լավ ժամանց ունեցան։ Հետո Մեհեմետ շահը թե՛

— Բանակատեղիս պետք է վերադառնամ։

— Հատուկ ձեզ համար սենյակ եմ պատրաստել տվել, — ասում է թահմազ Դուլին։

— Չե, բանակատեղիս չգնամ, չի լինի, — ավելացնում է Մեհեմետ շահը։

Թահմազ Դուլին թող տվեց։ Մեհեմետ շահը իր բանակատեղին գնաց և հետևյալ

1) Թահալը բեկանը՝ փղեթի վրա նստրված գահ է։
2) Ինագրում գրված է՝ «թըն առըմ արաղնտան» սըլը գըշի սիալ է. պետք է լինի՝ «այթը ստամ արաղնտան»։ Մ. Խ.

օրը լուր է ուղարկում թե՛ «սպասերագմ ունեմ»: Ըստ երևույթին նրա վեղիբն ու մեծամեծները չեն համաձայնվել:

Քահմազ Ղուլին նորից կանչել տալով Սաատեթ խանին՝ ասում է. «Երեկ շահը մեզ մոտ էր. եթե մեր սրտում կեղծիք կամ վրեժխնդրութիւն լիներ, մենք երեկ կը գործադրեինք: Մենք նրան ասացինք, որ բարեկամութեան ենք եկել, էնպես էլի, տեսութեան ենք եկել. դրիբ Մեհեմետ շահին— թող գա մի երկու խոսք էլ խոսեմ ու թողնեմ հեռանամ»:

Սաատեթ խանն ինչ է գրում- չի գրում, նորից բերել է տալիս Մեհեմետ Շահին:

Այս անգամ, որ եկավ էլ չթողեց նրան Քահմազ Ղուլին:

«Եղբայր, — ասում է Քահմազ Ղուլին, — վեց-յոթն օր ինձ մոտ ժամանակ անցկացնենք. բանակիդ հրաման տուր, որ ամեն մարդ թող իր տեղը գնա. մենք ձեզ հետ աշտեղ մի քանի օր ուրախութիւն անենք, հետո ես իմ նահանգը (երկիրը) կը գնամ, դու էլ կվերադառնաս և բարեկամութիւնը կմնա բարեկամութիւն».

այսպես համոզում ու հավատացնում է նրան:

Մեհեմետ շահը համոզվում և յուրայիններին նամակ է գրում՝ գովելով Քահմազ Ղուլիին, հրամայում է իր բանակին, որ ցրվին: Այնպես ել անում են: Ամեն մարդ իր տունն է գնում. ուղիմութեք և ամեն բան քաշում տանում են: Այսպես ուրեմն, Մեհեմետ շահի բանակը ետ քաշվում, գնում է, իսկ ինքը մնում Քահմազ Ղուլիի մոտ մի քանի հայրուր մարդով:

Վեց-եօթն օր հետո Քահմազ Ղուլին ասում է Մեհեմետ շահին. «Եղբայր քանի, որ մինչև աշտեղ եկել եմ, առանց ձիհանապատը տեսնելու. վերադառնալը սաղական է ...»:

Մեհեմետ շահն ինչ անի — ճարահան պատասխանում է. «հրամայեք միասին գնանք, եղբայր»:

Քահմազ Ղուլին թե. «մի վախենաք շահ, ես ամեն տեսակ մթերքից էլ առատութեամբ ունեմ, այսպես որ քաղաքից ոչինչ չեմ ուզի»:

Վեց-եօթն օրից հետո ճանապարհ ընկան

դեպի ձիհանապատ, ձիերը, պահելով կողք կողքի հավասար գծի վրա¹⁾:

Երբորդ իջևանում Քահմազ Ղուլին ասում է Մեհեմետ շահին. «Նամակ գրիբ, որ մեզ համար տեղ պատրաստեն: Մեհեմետ շահն էլ նամակ է գրում ձիհանապատ, որ իր պալատի մի մասը հատկացնեն հյուրին՝ Քահմազ Ղուլիին, որը մի քանի օր իրեն հյուր պիտի լինի և այլն: Եւ ուրիշ ինչ է գրում- չի գրում յուրայինները հրամանը կատարում են, պալատում տեղ պատրաստում:

Չորրորդ օրը Քահմազ Ղուլին ասում է. «այսպես... բացահայտ քաղաք մտնել չի լինի, դու պատգարակիդ մեջ մտիբ, չորս կողմը ծածկիբ և այդպես գիշերով մտնենք ձիհանապատ. որովհետեւ եթե այսպես մտնենք, ժողովորդը երես կառնէ [կշտանա] և հետո քեզ այնքան ել չի հնազանդիբ»:

Մեհեմետ շահն էլ միամիտ մարդ (և ոչ միայն Մեհեմետ շահն, այլ բոլոր Հնդկաստանցիք միամիտ են) Քահմազ Ղուլիի ասածին հավատում և այդպես էլ անում է. գիշերով մտն ձիհանապատ: Մենք ել միասին էինք:

Քահմազ Ղուլին քաղաք մտնելուն պես Մեհեմետ շահին բանտարկեց և ամբողջ վաճառականների աղբանքը գրավեց:

Ինչ հետո Սաատեթ խանին կանչում է իր ներկայութեան և նեղանալով ասում.

«Ով ստորին, դավաճան ողաշտոնյա, դու Մեհեմետ շահի հացը կերար, պատմուճանը հագար և նրա շնորհիվ այնքան փառքեր վայելեցիբ: Ով թաղավորադավաճան, դու քո ախրոջ թշնամութիւն կատարեցիբ. ինչ կը լինէր, որ դու ինձ չհնազանդիբ ու ես էլ քեզ սպանէի: Տղամարդ մարդը իր ախրոջ համար պետք է մեռնի, որպեսզի տերն էլ նրան օրհնենքով հիշի: Հիմա քեզ պիտի սպանեմ և ունեցած ամբողջ հարստութիւնդ ալ պիտի գրավեմ և երեք զավակներդ թշտաութեան մեջ պիտի մնան: Կորիբ աչքիցս ու էլ շուքդ էլ չտեսնեմ» — ասում է բարկութեամբ Քահմազ Ղուլին:

Այս խոսքերից Սաատեթ խանը խղճահարվում և անձնասպան է լինում: Նրա

¹⁾ Հավասար աստիճանի նշան:

ունեցվածքը գրավում-բերում են: Մասանթ խանը ապրելիս է եղել Տեքքյանում: Ասում են՝ ինքն էլ բնիկ Իրանցի՝ Նիշապուրցի էր: Թե Տեքքյանում, թե Պենկելաում տուն-տեղ է ունեցել:

Մի քանի օրից հետո Մեհեմետ շահի պալատի առջևի հրապարակի վրա Թահմազ Ղուլիի բանակի բաղաբը սարքված էր: Երկու շաբաթ վրաններ և նրանց միջի ուղիղ տարածությունը մի լայն ու կանոնավոր փողոցի տպավորություն էր թողնում: Հասարակ ճեղքեր (250 դրամ = 90 տրամ) գնդակ նետող պատրուկով հրացան ունեցող) հատկացված էր այս բաղաբի պահպանության:

«Էճնաս» կոչված մի խումբ մարդիկ, որոնք քաղաքացի չեն, քաղաքում ոչ տուն ունեն, ոչ էլ ունեցվածք. այդ նահանգից էլ չեն. վերջապես էճնաս ասինք յա, ինչ երկարացնեմ, չորս-հինգ հայրուք անվարատիներ, խորհրդակցություն են արել թե՛ մեզանից շատերը հինգ տարի, շատերը տասը տարի այս քաղաքում քարշ ենք գալիս. հիմի որ Թահմազ Ղուլին այս քաղաքը գրավեց, եկեք հարձակվենք բանակի բաղաբի վրա, Թահմազ Ղուլին պիտի նեղանա և քաղաքը ջարդել տա և ահա մենք այս առիթից օգտվելով մի քիչ բան-ման կը թալանենք և մեր երկիրը կզնանք, եթէ ոչ, այստեղ այսպես մնալով տարիներով պիտի փանեք-կորչենք. — կը լինի-չի լինի, այս էճնասները մտածում են [որոշում են]. մեկ էլ երեկոյան էզանի (արեւ մայր մտնելու ժամանակի աղոթք) ժամանակ մի հարձակում են գործում բանակի բաղաբի վրա: Թահմազ Ղուլին անմիջապես խնայում և կարգադրում է, որ ևս հազար ճեղքեր թող հսկեն և եթե մինչև առավոտ վաղ չանցան ևս գիտեմ իմ անելիքը: Մա էլ ասենք, որ Թահմազ Ղուլին չէին հայանել հարձակվողներին էճնասներ լինելու մասին այլ խմայրել էին թե քաղաքացիք ուղղում են բանակը ճնշել ու թալանել:

Հարձակվող էճնասները մինչև առավոտ չեն հետանում:

Առավոտյան աղոթքի ժամին Թահմազ Ղուլին դուրս եկավ Մեհեմետ շահի պալատից, կանգ առավ բանակի բաղաբի մաս և

ցատկոտ հայացքով գիտելով քաղաքը հրամայեց՝

— կրակ տվեք քաղաքը և թալանեցեք:

Ձինվորը տարածվեց քաղաքում. կրակ տվին-թալանեցին: Եւ կնիկ, երեխա աղջիկ-մաղջիկ, բոլորին գերի վերցրին:

Մի քանի օր անց քաղաքացիներից՝ խելքը դլխին, ընտանիքի տեր, բարեգործ վաճառականներ, մարդավարի մարդկանց զավակներ, մոտ հայրուք հողի հավաքվել են խորհակցելու, մեկն ասել է. «Այ մարդիկ, հիմա Թահմազ Ղուլին կարծում է, թե այս դեպքերը մենք՝ քաղաքացիներս ենք առաջ բերել». մի քանիսն էլ, թե. «Այ մարդ, եթե փորձենք նրա մոտ գնալ, բարկացնուք մարդ է, մեկ բոլորիս կմորթէ». ուրիշներն էլ սրանց առարկել են, թե «մորթելու է թող մորթի. մեր նամուսը, մեր կին ու երեխաները, մեր ունեցած չունեցածը գնալուց հետո, ինչ կարիք կա մեր ապրելուն»: Այսպես իրար համոզել, միաբանել և եկել են Թահմազ Ղուլիի մոտ:

Թահմազ Ղուլին սրանց տեսնելով տեսում է. «Այ հիմար գլուխներ, թե որ քաջ էիք, ինչո՞ւ ժամանակին քաղաքից դուրս չկովեցիք»:

Քաղաքացիները պատասխանում են՝ «Տեր իմ, նրանք [հարձակվողները] բոլորը էճնասներ են, լսի մարդիկ, մենք ձեզ դեմ կովելու չենք ելել, և վերե բացատրվածին պես տեղակայնում են Թահմազ Ղուլիին»:

Թահմազ Ղուլին մտածեց, որ խկապես բանակի բաղաբին հարձակվելը քաղաքացիների դործ չի կարող լինել, լաց եղավ և ասաց՝

— Իսկապես այս խնդրում ես թերի եմ մտածել և մոռնալի կանչել ավից. «վայ նրան, ով երեք օրվա ընթացքում իր վերցրած գերիները չվերադարձնի. երեք օրից հետո ում մոտ որ գերի գտնեմ նրան կը գլխատեմ»:

Եւ Թահմազի կրտսեր (փոքր) Արուսիկն (այս պատմությունը գրողը), երեք օրից հետո բանակի բաղաբում ներկա եղաւ երեկոյան դեմ ուղեցի պալատի դռնից ներս մտնել և հանդիպեցի կանանց, երեխանե-

րի, աղջիկների, որոնց վրա միայն մեկ-մեկ վարտիկ, դուրս էին գալիս լաց ու կոծով, գլխներին ձեծելով: Մտաւորապես հազար հոգի կը լինէին: Ես այնտեղ, դռների արանքում ստամ [ապշած] մնացի: Արարիչ աստուծո այս դարձանքի բանն էլ այստեղ տեսա:

Այս բոլորից հետո, Քահնազ Դուլին Մեհեմետ շահի հետ միասին այդ պարտի մի հրապարակում հանդես սարքեց. և որպեսզի բոլորը տեսնեն, դիտեն, փոխած դորպերի վրա նստած, ճաշեցին: Քահնազ Դուլին կանչել ավեց ինչքան երգիչներ, նվագողներ, ծաղրածուներ, կատակասոսներ, հաճոյախոսներ և գուռնաճիներ, թմբկահարներ կան, բոլորին, մի տեղ հավաքել ավեց և հրամայեց որ ամեն մեկը իր շնորհքը ցույց տա:

Այս հանդեսը որ շեպ իւլ անքեր է կոչվում, պարսից շահերը կազմակերպելիս են կել ընդհանրապես Պայրոմի տոներին և դարձանամուտին:

Այս «շեպ իւլ անքեր» կոչվածը այնպիսի մի ուրախութեան է, որ ոչ ոք իրար չի հասկանում, ոչ ոք իրար ձայն չի բուռ, խառնափնդոր մի աղմուկ: Ահա այսպիսի մի խառնիխուռն բան է, ուր այդ դիշեր մենք էլ սազ էինք նվագում: Հիմի դուք կասեք, թե՛ «Բա որ իրար չէիք հասկանում, ոնց էիք նվագում».— Այ մարդ դու էլ, այդ աղմուկի մեջ սազ կարող ես նվագել, ավելին՝ մենք մեր երգած եղանակը չէինք հասկանում, ուր մնաց կողքի ընկերոջդ եղանակը հասկանաս: Այնքան որ մզրապը (զարկան) զարկում էինք, հա դարկում, իրրե թե բան էինք նվագում. դատարկ բան: Մինչդեռ անվերջ դիտում էինք Քահնազ Դուլի ինձույքը. տեսնում էինք նրանց (Մեհեմետ շահի հետ) խոսակցութեանը, բայց թե ինչ էին խոսում, ի հարկե չէինք լսում: Միայն թե մի պահ տեսանք, որ Քահնազ Դուլին Մեհեմետ շահի զլխի ցցունքը առավ և իր կողքը՝ գեանի վրա դրավ: Մի որոշ ժամանակ անց՝ Քահնազ Դուլին գեանից վերցրեց Մեհեմետ շահի ցցունքը և անցրեց նրա գլխին: Մենք սազ նվագելիս այս բոլորը տեսանք. խկապես մեր աչքերից էլ արտասուքներ դուրս

եկան: Հետո նաև այն տեսանք, որ երկուսն էլ սաքի ելան, ձեռքերնին բարձրացրին, աղոթեցին ու համբուրվեցին:

Հետևյալ օրը, այնքան միայն լսեցինք, որ Քահնազ Դուլին Մեհեմետ շահի աղջիկը իրա տղին է առել: Ես չեմ տեսել, լսողաց եմ, ինչու որ հարսանիք բան չեղավ, որ մենք էլ խմանայինք: Ոմանք ասում էին Մեհեմետ շահի աղջիկն է, ոմանք թե՛. ուրիշի աղջիկն է: Է՛ն այդ էլ պակաս մնա, թող չխմանանք:

Այս հանդեսից հետո, երեք-չորս օր էլ մնացինք Ճիհանապատում, հետո դուրս եկանք: Ճիհանապատում և շրջակայքում ընդամենը մնացինք իննսուն օր:

Երբ ճանապարհ ընկանք, Մեհեմետ շահը Քահնազ Դուլին ողջերթի կկալ երկու-երեք հանգրվան և այնտեղ իրար մաղթանքներ հայտնելով, մենք՝ այս կողմ, Մեհեմետ շահն էլ ես դարձավ դեպի Ճիհանապատ:

ԳՆՈՒՆ ՈՒԹԵՐՈՐԳ

Մեհեմետ շահից բաժանվելուց հետո Քահնազ Դուլին ուղղութեան բռնեց դեպի Սինդ: Սինդը մեր թեքված տեղից այնքան հեռու է, որքան էրդրումը Սաամադուլից: Թե որտեղից թեքվեցինք դեպի Սինդ, դժվարանում եմ ճիշտ ասել, որովհետև անունները խրթին էին և մաքուր չեն մնացել: Այնքանը միայն դիտեմ, որ Լահորն անցել էինք. մանավանդ որ Լահորի [Բաճ] ատր խանը Քահնազ Դուլին նվերներ մատուցեց:

Քահնազ Դուլին մի քանի օր Լահորում մնաց. Բահատուր խանին ինչ որ պատվերներ տալուց հետո նոր միայն ճանապարհ ընկավ: Այս մեջբերումն արի նրա համար, որ դեպի Սինդ մեր թեքված տեղի՝ Լահորից այս կողմ լինելը հաստատեմ:

Քահնազ Դուլին նախքան Ճիհանապատ գնալը՝ պատվիրակ էր ուղարկել Սինդի խանին, որ անողայման իր մոտ գա: Իսկ Սինդի խանը պատասխանել էր. «Բա Քահնազ Դուլին ինչացն է, որ ես նրա սաքը պիտի գամ կղեր. այ քեզ բան. դու էլ քո տերն էլ դալաթ եք արել (խալթ եք կերել՝ հանցավոր սխալութեան), Այսպես հանդիմանել ու ճամբու եք գրել Քահնազ Դուլի

պատգամավորին: Պատգամավորն էլ ինչ որ լսել էր Սինդի խանից, եկել նույնությամբ հաղորդել էր Քանմաղ Ղուլին, ինչպես նաև խանի հետևյալ խոսքերը.—

«Թող մի անգամ Հինդը նվաճի, նոր ինձ հրամայի»:

Քանմաղ Ղուլին նեղացել էր:

Եվ ահա Քանմաղ Ղուլին Հինդը նվաճելուց վերադարձին՝ նորից լուր ուղարկեց: Սինդու խանը նորից չեկավ և Քանմաղ Ղուլին քաշեց բանակը Սինդու վրա:

Ինչպես վերև ասացինք հեռավորությունը Սաամբուլից միջև էրդրում էր, բայց ճանապարհը շատ վատ, դժվարանցանելի անտառապատ և տեղ-տեղ շատ շոգ:

Քանմաղ Ղուլին դեռ Սինդ չհասած, Սինդի խանը համոզվում է, որ Քանմաղ Ղուլին պիտի գա հասնի, որովհետև տեսնում է, որ Քանմաղ Ղուլին այս ճանապարհին լավ տեղյակի պես, առանց վարանելու, բայց և դանդաղ առաջանում է:

Որ դրանում համոզվում է Սինդի խանը, իր քաղաքացիներին կանչում և ասում է. «Դուք ասում էիք և մենք բոլորս էլ կարծում էինք, որ Քանմաղ Ղուլին մեր ճանապարհներում պիտի մուրրվի ու ինքն էլ իր բանակն էլ պիտի կործանվեն և նրա ամբողջ ունեցվածքը մեզ պիտի մնա, բայց իրողությունը մեր կարծածին ճիշտ հակառակը դուրս եկավ: Հիմա պետք է շտապ դորձի ձեռնարկենք»:

Իսկապես, որ այս Սինդի ճանապարհները այնպիսի դժվարանցանելի և դահավեժ տեղեր են, որ այժի ուրբը հազիվ կարող են անցնել: Եվ թող անտառի միջով անցնող ճանապարհների մասին խոսելը: Ծիշան ասած ես շատ էի հա ընկնում և տսում՝ թող սպանեն, միայն թե այս ճանապարհներից ազատվեմ: Բայց ժամանակն այնպես էր, որ դայն ու գառը միասին էին ման գալիս: Եվ եր ամաչում մարդ սպանելուց:

Հիմա գանք մեր բուն պատմությանը:

Սինդի քաղաքացիները պատասխանում են խանին, թե «ինչ անենք տեր իմ, էլի հրամանը ձերն է. դուք կարող եք մի ճաբ անել: Մանը պատասխանում է՝ ձեր տները կը վառեք, ինչքան տարանք որ ձեզ հետ կարող եք տանել կը տանեք, մնացածը կը թաղեք»:

Բուրն էլ նրա խորհուրդին հետևում են մանավանդ, որ խանը խոստանում է Քանմաղ Ղուլիի վնասուց հետո իր ծախսով շինել տալ և վնասները հատուցել: Քաղաքը վառում են ու փախչում. մեր փախչում. վառված քաղաքից վեց-եոթն հանգրվան հեռու՝ իրենց ամառվա քաղաքը, սրտեղ ամեն մեկը իր ամառանոցը կամ տունն ունի:

Սինդ քաղաքը շատ շոգ է լինում, այնպես որ հուլիս ամսում եթե խմոր շաղվես ու լավաշի պես բանալով արևին դնես, քիչ կը մնա որ եփի: Սինդցիները, որ շոգին վարժ են, իրանք անգամ չեն կարողանում դիմանալ և տարվա չորս եղանակներից մեկն այդ ամառանոցում են անցկացնում:

Սինդ քաղաքում հորեր փորեցինք: Սառը կենսատու ջուր դուրս եկավ, բայց պետք է հորի գլուխը կենալ և խմել. իսկ եթե հինգ բոսի անցավ, այնպես տաքանում է որ: Ես մի սավան ունեի. մերկանում, այդ սավանը ջրում թրջում, առանց քամելու փաթաթում դլխիս. միջև նարկիլիս կրակը վառեմ, սավանը չոփ-չոր, հարեթի նման էր լինում: Նորից էի ջրի մեջ թաթախում սավանս և վրաս առնում, նարկիլիս կրակը մարած էր լինում, մինչև վառէի, սավանս նորից չորանում էր: Այսպես էր բոլորիս կյանքը: Ինչ երկարացնեմ, երկու քեֆը մի անգամից չէի կարողանում վայելել՝ մինչև նարկիլիս էի վառում, սավանս էր չորանում, մինչև սավանս էի թրջում, նարկիլիս էր մարում: Վերջապես ճիշտ որ երկու քեֆը միատեղ չկարողացա վայելել: Հիմի դու պատկերացուր, թե ինչպիսի երկիր է եղել այս տեղը:

Երբ Քանմաղ Ղուլին տեսավ, որ տեղացիները վառել ու փախել են, մի մարդ գլուխով և հարցրեց նրանից, թե քանի օր է փախել են, նա էլ պատասխանեց, թե վեց օր է: Այս լսելուն պես, վստահ իր բաղմաթիվ ձիերին, մի բոսի էլ կանգ չառավ դինվոր վերցրեց և շտապ առաջ խաղաց հետապնդելու: Փախչողները առավոտ հասնում են, Քանմաղ Ղուլին երեկոյան արգեն նրանց պաշարում է: Այնտեղ, ծովեղերքում մեծ բերդ է եղել:

Մենք բանակի հետ էինք մնացել Շաս չերկարացնենք, զբաղեց, խանին իր գա-

եկանք—հասանք մինչև Ղանտահար:

Այստեղ լուր տարածվեց որ թահմազ Ղուլին թավուզի թախտը Ղանտահարում պիտի սարքավորէ, բայց չարեց: Ասին Ֆերահում պիտի սարքավորե, այնտեղ էլ չարեց. հասանք Հերաթ. այստեղ բերդից դուրս սարքավորեց և բանակում գտնվող բազմաթիվ գնացին գիտելու: Մենք էլ գնացինք: Տեսանք թավուզի թախտը սարքել են, նրա կողքն էլ մարդարտաշար վերանք:

Թավուզի թախտը միակտոր գոհարներից, թանկագին քարերով զարդարված հինգ հողի նստելու տեղ ունեցող գահ էր: Գահի վերեք լուսնաձև, նման էր կախովի խաղողի որթատունկի:

Ամբողջ գահի մեջն ու գուրսը շինված էր միակտոր գոհարներից: Վերեք լուսնաձևով վրան գոհարներից մի սիրամարդ էր շինվել և սիրամարդի փետուրների վրա ինչքան որ գույներ կան, բոլոր գույներն էլ գտել ու համապատասխան ձևով դասավորել էին:

Եվ որովհետև գահի վերեք լուսնի վրա սիրամարդ էին տեղավորել, այդ խակ պատճառով այդ գահը կոչվում է թավուզի (սիրամարդի) թախտ:

Այս գահի բոլոր ձողերն ու մասերը մասնատվում և պետք եղած ժամանակ միացնելով, հատուկ կառուցվածքով սնդաղավում են: Այնպես որ ցանկացած բռակին կարելի է մասնատել և սնդուկների մեջ տեղավորել: Ահա այսպիսի հմտությամբ շինված էր:

Իսկ կողքի մարդարտաշար վրանի վրա մարդարիտներով առլեֆեր (. . .) և ֆենիքյարիներ (. . . .) են բանել: Վրանը երկու սյունանի էր և այդ սյուները գոհարներով զարդարված էին. մեկը սպիտակ մյուսը դեղին արծաթաթիվերով: Վրանի մի ցիցը ոսկի, մյուսը արծաթ: Ահա այսպիսի վրան էր շինել ավել թահմազ Ղուլին:

Թահմազ Ղուլին յոթանասուն հազար կով, եզ, գոմեշ քչեց Հնդկաստանից գեղի Պարսկաստան: Ծանաղարհին թեև երեսուն հազարը փչացավ, բայց քառասուն հազարը Իրան հասավ: Այսպես համաչափ, գեղեցիկ, պոյով ու լիքը, աչքերը ծարիր քաշած,

կնճիթները¹⁾ միջև գետին: Հնդկաստանում այնքան շատ և այնքան տաա են, որ թահմազ Ղուլին յոթանասուն հազարը թեև քչեց բերեց, բայց էլի կետեց ավելին այնտեղ մնաց:

Այս Հերաթ քաղաքում էլ մեզ ծառայությունից ազատեց: Մեզ համար գրություն ավեց և մենք ճանաղարհ ընկանք գեղի Պոլիս:

Հերաթից Պորասան եկանք և այստեղ տասնը երեք օր կանգ առանք: Պորասանը մի մզկիթ (Իսլամների աղոթատեղի) ունի, որ կոչվում է Իմամ Բիգա: Այս մզկիթի կառուրը կապարի փոխարեն ոսկով է ծածկված: Իսկ ներսի առաստաղը՝ դեղին կրակարանի²⁾ թիթեղի նման ոսկով պատած: Դառակուսի քարերով շինված գույնզգույն մինարեթի զազաթի նշանը (ալիմ) ոսկուց է:

Այնպես պատմեցին թե՛ երբ թահմազ Ղուլին շահ է դառնում, այդ մզկիթի ոսկե ծածկը հանել է տալիս և փող կտրում ասելով. «Եթե ոտքս այսու կոխեց (եթե շահ դառնալս հաջողվեց), ոչ միայն ոսկյա թիթեղով կը ծածկեմ, այլ և դեմն ու գեմը մի հատ էլ գեղիլ (մտտուս?) կը կառուցեմ»:

Նպատակին հասել և կառուցել է:

Ես Պորասանում այդ գեղիլն էլ տեսա, սրա ծածկն էլ ոսկի էր: Այդպես ասին, մենք էլ հավատացինք. խո փորձաքարին³⁾ ենթարկելու հնարավորություն չունեինք:

Պորասանի մարդիկը⁴⁾ ընավորությամբ մոլեռանդ են: Վերջապես ամեն բան ընդգիծությամբ լայնանում է տեղ են (հալածումը տարածում է):

Քանի որ խորասանցիների մասին մոլեռանդ են ասացինք, նրանցից մի բան պատմեմ ձեզ:

Պորասանում, հնուց ընտանիքավոր հայեր չեն եղել: Թահմազ Ղուլին շահ դառնալու ժամանակ նպատակ է դրել Պորասանում մի հայու թաղ հիմնել Սպահանի մոտի Ջուղայի նման: Ամեն գյուղից և քաղա-

¹⁾ Ըստ երեսիթին խոսքը՝ բիզանդների մասին է:

²⁾ Արևելքի հյուրասենյակներում 80 սանտիմ բարձրությամբ դեղին փայլուն կրակարաններ գործ էին ածում:

³⁾ Ոսկու սրակը սրաշող քար:

⁴⁾ Ըստ երեսիթին խոսքը միայն հայերի մասին է:

քից ընտանիքավոր հայեր է պահանջել, որպէսզի նրանց տեղափոխի Խորասան:

Քե քաղաքացիներ, թե գյուղացիներ միարանելով, իրենց շրջակայքում ինչքան հովարատ (լոթի) հարբեցող, ծուլլ, ծուռ, տուրք-հաւած չափող, մեծի-պղտիկի հարզը չիմացող և այլ այս տեսակ մարդկանց ցուցակը կազմում ու Քահմազ Ղուլին ներկայացնում են Քահմազ Ղուլին էլ սրանց բուլտրին տանում է Խորասան:

Քահմազ Ղուլին Խորասան բերած այս հայերին տալիս է տնտեսը, ցանքսի տեղ, այգու տեղ, լծասարք, սերժացու, եկեղեցու տեղ և հազար թուժան էլ փող՝ եկեղեցին շինել տալու: Իսկ այս հայերը ամբողջ օրով հարբած ման գալով, մի քահնի տարում ուտում վերջացնում են այդ հազար թուժանը:

Այն Խորասանցին (պարսիկը), որ մի ժամանակ քրիստոնյայի (— քաֆուր) փեշը եթե իր փեշին դաշեր, իր փեշը կը կտրեր այդ նույն Խորասանցիներին հիմի այս հայերը բռնում ձեռում, հայհոյում են նրանց ու նրանց կրօնին: Մի ժամանակ Իմամ Բիգա միզկիթի դանից անցնող հային մեղցնելիս են եղել: Հիմա հայերը հարբած քշում-մըտնում են մզկիթի մեջ, հրում, հրժշտում դուրս են վանում (պարսիկներին) և Քահմազ Ղուլի սարսափից ոչ մի Խորասանցի ոչ մի ձայն չի հանում, մի ճկույթով էլ չեն դարկում: Ահա վասիկ մեր ազգի մեջ ինչ տեսակ «չեղեպիներ» ունենք. բայց և այնպէս մաղթենք, որ մեր ազգից նման «բարեգործ», «իմաստուն» մարդիկ անպակաս լինեն. ինչու որ՝ խոսք կա, թե՛ կըթուփյունը ուժից սովորեցիր:

— Անկերթից, — պատասխանում են:

Եկեղեցի շինելու համար Քահմազ Ղուլի նվիրած հազար թուժանը մսխող այս «չեղեպիներին» էլ տեսանք Խորասանում: Իմ տեսածս (եկեղեցին) չորս պատ էր, վրան բաց:

ԳԼՈՒԿ ՏԱՍԵՐՈՐԴ

Հիմի ևս ձեզ պիտի պատմեմ թե Քահմազ Ղուլին ոնց է շահ գառնում:

Նվազածուների վրանը բանակատեղից

Սկսւտարի և Պեշիկթաշի հեռավորության չափ (մոտ 2 կիլոմետր) հեռու էր: Բանակատեղիի կենտրոնում Շահի վրանն էր, որի երեք կողմում իրեն մերձավորների վրաններն էին, իսկ առաջը՝ ընդարձակ հրապարակ ձիարշավի գաշալի նման:

Շահի վրանը կենտրոնում իր բարձրությամբ նմանվում եր «տիքիլի թաշ»-ին¹⁾ Միշտ այսպէս էր: — Իրանից մինչև Խայրի կիրճը այսպէս էր, իսկ Խայրից դենը բոլորս միատեղ էինք:

Մեր՝ նվազածուների վրանը շահի և իր ավագանու վրանների մոտն էր դրվում: Իրա համար էլ ինչ անցնում-դառնում էր շահի մոտ, բոլորը տեսնում, դիտում էինք. ինչպէս տեսել էինք Մեհմեհա շահի գալն ու գնալը:

Խոսքս այն մասին է, թե նախքան Խայրերը հասնելը մեր՝ նվազածուներիս վրանը բանակատեղից հեռու էր: Վտանդավոր կանգառներում Քահմազ Ղուլի հորեղբոր տղան, որ խան էր և ուներ հազար մարդ, իր այդ հազար հողով, Քահմազ Ղուլի կարգադրությամբ շրջանակաձև պահակություն եր կադմակերպում: Հորեղբոր տղան ասում էր «ես օսմանցիներին շատ եմ սիրում» — և իր ժամանակը գրեթե մեր վրանում էր անցկացնում: Նվազածուի պետի մոտ չէր գընում, այլ միշտ մեզ մոտ էր. տարեքով էլ Քահմազ Ղուլից կամ մի տարով մեծ կամ մի տարով փոքր կլիներ:

Մենք պատմել տվինք Քահմազ Ղուլի հորեղբոր տղին, թե ինչպէս Քահմազ Ղուլին շահ դարձավ: Եւ անա նրանից ինչպէս լըսել ենք, այնպէս էլ պատմում ենք:

Քահմազ Ղուլին ընկի Քելաթցի էր, ինքն էլ քուրդ: Եթե ուզում ես իմանալ, թե որտեղի քուրդ է, — Տիարբեքիլի շիմի պիտի տեսա, թե ինչ առնչություն Տիարբեքիլի քուրդը իրանցի լինի ու Քելաթցի, Քելաթ որ Խորասանից հինգ հանգրվանով ճանապարհ էլ դեպի խորն է: Ասեմ. — Շահ Աբրահա Քաղտատից հարձակվում է [օսմանցիների վրա] և մինչև Պուլից նորին մեծություն Սուլթան Մուրատը պատրաստվում է, ասդին շահ Աբրահա Տիարբեքիլի շրջա-

¹⁾ Պուլում հին հուշարձաններից՝ կոթող:

կա գյուղերը դարկում—քշում է գեպի Քելաթ:

Ահա այս Քելաթ քշված քրդերի սերնդից է Քահմազ Ղուլին:

Ակզբում երկրագործ է եղել. մի խնդրագիր տալու գործ է պատահում և նա Քելաթից երկու տարով հեռանում, լինում է Սպահանում:

Սպահանում խնդրագիրը ձեռիցը առնում են, տարած նվերներն էլ առնում, պատվում ու շնորհում, ստուն՝ ստուն՝ ասելով դատարկ խոստումներով քնեցնում, ճամբում են: Խընդրագիրն պատասխան չեն տալիս: Խնդիրքը հետապնդելիս, մի օր առանց նվերի է գնում, ծեծում վճարում են: Այսպես երկու տարի իր խնդրագրի համար գնում-գալիս է ու արդյունքի չի հասնում:

Շահ դառնալուց հետո այս խնդրագրի պատմությունը պատմում է իր գինակիցներին ու ծաղրածուններին. նրանք էլ ամիսը մի քանի անգամ իր ներկայությամբ այս «խնդրագրի» գեպքը կրկնում են (որպես ներկայացում):

Ինքը Քահմազ Ղուլին ասում էր. «Ահա-վասիկ նրանց, այդ հիմարների (նախորդ շահերի) օրով, նրանց բանն ու գործը այսպես էր»:

Երկու տարի խնդրագրի համար ապարդյուն գնալ-գալուց հետո Քահմազ Ղուլին դառնում է սրանեղ և այդ ժամանակ նա սկսում է Խորասանի շրջակայքում զողություն անել, ճանապարհ կտրել, մարդկանց կողոպտել, մենակ անցքեր (կրճեր) փակել և ճամբա չի տալիս մարդկանց:

Ղուլը հասնում է Խորասանի խանին թե քո սահմաններում այսպիսի մի ճանապարհ կտրող, մարդ սպանող, թալանող է երևան եկել: Խորասանի խանն էլ մի տասնապետ է ուղարկում, որը մի կերպ սրան բռնում բերում է խանի մոտ: Խանը սրան հարց է տալիս.

Ինչ ես ճանապարհներում մարդ սպանող, թալանողը:

Քահմազ Ղուլին չի ժխտում, չի ուրախում:

— Այո խանս, ճիշտ է, ես եմ,—ասում է: Խանը թե. —Բա հիմար գլուխ, դու չես իմանում, որ այստեղ խան կա. դու ճվ ես որ հանդգնում ես այսպիսի բաների:

Քահմազ Ղուլին պապանձվում է: Խանը հրամայում է տանել և գլխատել:

Քահմազ Ղուլին աղաչում է. «աման խանրս, ինձ գլխատել մի տուր, իմ պիղծ արյունս թափել տալու պատճառ մի լինի, ես մինչև անխարհի վերջը քեզ ծառա, քեզ դիմվոր կը լինեմ»:

Այսպես աղաչում-պաղատում է:

Խանի մոտ նստած բեգերն էլ միջամբտում, խնդրում և ասում են. «Այսպիսի մարդու արյունը թափել մի տուր. մի կռիվ լինելիս առաջ քշիւ, թող դնա մեռնի. արանքում դու կազատվես արյան պարտքից»:

Այս միջամտությունների վրա՝ ի պատիվ հյուրերի՝ խանն էլ բաշխում է նրա կյանքը և մի տասնապետ կանչելով՝ նրան հանձնում—որպես գինվոր:

Խորասանի շրջակա գյուղերի և հարևան Ուզբեկական գյուղերի միջև սովորություն է եղել—իրար վրա հարձակվել, դարնել ու թալանել: Ուզբեկները նորից են հարձակվում: Այս մասին լուր է գալիս խանին, խանն էլ կարգադրում է այն տասնապետին, որի տասնյակի մեջ է լինում Քահմազ Ղուլին: Գնում են կռվում և այդ կռվում Քահմազ Ղուլին քաջություն է ցույց տալիս:

Ուզբեկները լինում են շորս-հինգ հոգի. իսկ սրանք տասը հոգով հուպ են տալիս ու ուզբեկներին ցրում:

Խորասան վերադարձին, տասնապետը զեկուցում է խանին—«Տէր իմ,—ասում է նա,—էն զողը չկա, որի կյանքը բաշխեցիք, կռվում բավական քաջութուն ցույց տվեց: Խանն էլ գոհ տրամադրությամբ Քահմազ Ղուլին տասնապետի աստիճանին է բարձրացնում:

Մերթ ընդ մերթ գյուղերի վրա կատարվող ուզբեկական հարձակումների դեմ Խորասանի խանը Քահմազ Ղուլի—տասնապետին է ուղարկում: Սա էլ գնում ու հաջողությամբ է դառնում:

Խորասանի խանը Քահմազ Ղուլին տասնապետությունից բարձրացնում է հիսնապետի աստիճանին և ուր և ինչ գործի որ ուղարկում է՝ Քահմազ Ղուլին հաջողությամբ է վերադառնում:

Խանը նրան բարձրացնում է հարյուրապետի աստիճանին: Հարյուրապետությունից

հազարապետութեան և որովհետև հափազանց գործունէյա է լինում, մի օր էլ նրան բարձրացնում է սենեկապետութեան (խանի պալատի պարեա)։

Մի օր խանը իր առանձնասենյակում դիրք կարգալիս, երբ դրսից էլ ոչ մի մարդ չի լինում, Քանազ Դուրսն ոտնամանները հանում մանուկ խանի մոտ ու փաթաթւում է խանի ոտներին։ Խանը զարմացած հարց է տալիս, թե բանն ինչու՞ն է։ Քանազ Դուրսն պատասխանում է. «Աստուծո հրամանով քո աղջիկն ևս ուզում»։ Խանը էլ չի մերժում ու ասում է ավի։

Քանազ Դուրսն դառնում է խանի փեսա։

Որոշ ժամանակ անցնելուց հետո Մյուրփեյիզը Դանտահարից հարձակւում ու Ծերահր գրավում է։ Ավիլի առաջանալով գրավում է Հերաթը։ Հերաթից էլ առաջանալով դալիս է Խորասանի վրա։ Բայց Խորասանում նրանք ոչինչ անել չեն կարողանում, որովհետև աներ ու փեսա Խորասանի զորքի զլուխն անցած փախցնում են Մյուրփեյիզին։

Մյուրփեյիզը լուր է ուղարկում Խորասանի խանին և ասում. «Այժմ ես գնում եմ Սպահանի վրա, գնամ գրավեմ և դուք այդ ժամանակ ինքներդ ինձ կը խնդրեք, կը հանձնվեք»։

Խորասանի խանը իր փեսա Քանազ Դուրսի հետ միասին հուզ կն տալիս Մյուրփեյիզին ու պատասխանում են. «Ինչ որ ձեռքիցդ կգա ես չթողնեմ»։ Եվ Մյուրփեյիզը քաշում-գնում է իր զորքը դեպի Սպահան։

Հասնում և գրավում է Սպահանը։ Բընում է շահ Հյուսեյնին, որի երեսուն չորս աղաներից քսանյոթին սրի է քաշում իրենց հոր՝ շահ Հյուսեյնի աչքի առջ, հետո շահ Հուսեյնին էլ է սպանում։

Բայց այս բոլորը ոչ թե Մյուրփեյիզը, այլ նրա վեզիր՝ Միր Մանուան է անում, քանի որ Մյուրփեյիզը Սպահան մանկուց անմիջապես հետո մեռնում է, և Միր Մանուանը՝ ինքնիրեն շահ հայտարարելով՝ բընում է շահ Հուսեյնին և այդ սպանութիւնները կատարում։

Հետո Միր Մանուանը ուսերից մինչև դաստակները (կաթված?) է ստանում։

Միր Մանուանի վեզիր էշրեֆը, տեսնելով,

որ Միր Մանուանը արդեն սնհույս է, զբուխը կտրել է տալիս և ինքն իրեն հայտարարում է շահ էշրեֆ։

Այդ սպանութեան միջոցին, շահ Հուսեյնի հալատարիմ լալաները, նրա մնացած ետքը երեխաներին մի հնարքով փախցնում են։ Ոմանց տանում այլ երկրներ, ոմանց պահում շրջաններում [Սպահան]։

Հետագայում Աղվանը [շահ էշրեֆը] օսմանցու հետ կռիվ է անում, ջարդում, ջարդվում։ Ինչ երկարացնեմ, այս դեպքերը մեզ հարկավոր չեն, մեզ հարկավորը Քանազ Դուրսի շահ դառնալու պատմութիւնն է. ուրեմն անցնենք մեր պատմութեան։

Երբ Սպահանում աղվաններն էին, Խորասանի խանը իր փեսա Քանազ Դուրսի հետ Խորասանի զորքի զլուխն անցած, քաղաք առ քաղաք կռիվ տալով, և աղվան զինվորներին ցրել տալով՝ առաջանում, հասնում է Սպահան։ Սպահանից էլ փախցնում Աղվաններին և շահ Հուսեյնի Քանազ անունով մի տղային գանում են։

Շահազունին պահել էին Սպահանում։

ԳՒՈՒԽ ՏԱՍՆԸՄԵՎԵՐՐՈՐԻ

Շահ Հուսեյնի տղին Քանազին շահ են կարգում շահ Քանազ անունով և նրան հալատարութիւն ուխտում։

Հաղիվ տասներեքուկես կամ տասնը չորս տարեկան մի ազնիվ, անարատ, վիզը երկար, աչք ու հոնքերը սև մի ծաղիկ էր։

Հաղիվ թե այսքան վայելուչ մեկը նրոտած լինի գահում։ Մենք նրան չենք տեսել, բայց Սպահանում մեզ ցույց տվին նրա նկարը և այնպիսին է, սնց վերևը պատկերացրի։

Քանազ Դուրսի աներ՝ Խորասանի խանը վեզիր է լինում շահ Քանազին մոտ, և այս առիթով իր փեսա Քանազ Դուրսին խանութիւն տրուցու է շնորհել տալիս։

Երբ Մյուրփեյիզը [աղվանները] գրաված է եղել Սպահանը, ինչքան գանձ ու հարստութիւն է եղել Սպահանում, բոլորը քաշել տարել է Դանտահար։

Մյուրփեյիզի սկիւրջապետի հետ տեսնվեցի Սպահանում։ Սա Զուղաեցի մի ծերունի հայ էր, արհեստով սկիւրջի Շատ էինք տեսնվում ու խոսում։ Նա իր պատմութիւնը լալով էր պատմում։

«Երեսուն պատման շահի քարով գոհարեղենը ձեռքերովս տեղափոխեցի: Թե ազամանդը և թե հակինթը, լաչն ու զմբուխարը ինքս ոսկինների վրայից հանեցի, վերջրի մի պարկի մեջ և իմ ձեռքերով կշռեցի երեսուն պատման շահտաշխով գոհարեղեն»: Թե հարց տաս շահտաշին ինչքան է. — ամեն մի պատմանը չորս ու կես օխա է [ուրեմն 1° օխա = 1,280 կգ 1 պատման = 5,770 կգ.: $5,770 \times 30 = 173$ [հարյուր յոթանասուն երեք կիլոգրամ գոհարեղեն):

Ինչպես տեսնում էք Մյուրվեյիզը ինչ կար-կշար կողոպտել տարել էր: Հիմի տեսնենք, թե թահմազ Ղուլիի աները առանց փողի ինչ պիտի անի, շատ էլ վեզիր եղավ:

Ի միջի այլոց շատ լուրջ մարդ է լինում այս վեզիրը, միևնույն ժամանակ խոստումնապահ և քաջ: Նրա ուժը ցույց տալու համար պատմում են, որ գորգի կամ կարպետի ծաղիկները եթե ուղենա հանել, երկու մատով մի անգամից այնպես հարվածում էր ու ծակում, որ կարծես մկրատով կտրված լինի: Ահա այսպիսի ուժի տեր է եղել թահմազ Ղուլիի աներ, Խորասանի խան, այժմյան վեզիրը:

Վեզիրը որոշ ժամանակ մտածում է փող ձարելու մասին: Առանց փողի գործ չի լինի: Վերջապես սոճիկ պետք է տար: Բացի գրանից Օսմանցու հետ խոսել, Մոսկովի հետ խոսել, առանց փողի ոչինչ չի կարող անել: Մտածում է, որ Հնդկաստանի շահի հետ բարեկամ է, դիմում է շահ թահմազին թե. — Շահս, այսպես առանց փողի չի լինի. մի քանի նահանգներ Օսմանցին է գրավել. մի քանիսն էլ Մոսկովցին, առանց փողի գործ չենք կարող անել:

Շահ թահմազը պատասխանում է՝

— Ես ինչ գիտեմ, ես թերահաս և խամ մարդ եմ, դու գիտես:

Թահմազ Ղուլիի աները ասում է՝

— Այ շահս, արի դու ինձ որպես գեսալան Հնդկաստան ուղարկիր, գնամ մուրհակով մի քիչ փող վերցնեմ, որպեսզի գինյորների սոճիկը տանք թշնամու ձեռքն անցած նահանգները ազատենք: Հետո աստված մեզ երբ որ տվեց, մենք էլ այն ժամանակ մեր պարտքը Հնդկաստանի շահին կտանք:

Շահ թահմազը հարցնում է՝

— Լավ, համաձայն եմ, բայց դու որ գնաս վեզիրությունը մի պիտի կատարի: Վեզիրը պատասխանում է՝

— Թահմազ Ղուլիին վեզիր կարգենք, իմ փեսաս է:

Շահը կանչում է թահմազ Ղուլիին և խոսքը նրան ուղղելով ասում՝

— Թահմազ Ղուլի, բեզ վեզիր կարգեցի:

— Ես այդպես ի միջի այլոց վեզիր չեմ լինի, պատասխանում է թահմազ Ղուլին: — Ինչո՞ւ:

— Տուր ինձ թագափորական հրամանագիր այն մասին, որ իմ գործիս ոչ ոք չպետք է միջամտի, և ես պետք է ղեկավարեմ այնպես, ինչպես ինքս եմ հասկանում:

— Լավ, — ասում է շահ թահմազը և տալիս է նրան պահանջած թագափորական հրամանագիրը: Բացի գրանից, իր գլխից մի վարսակալ հանելով, գնում է թահմազ Ղուլիի գլխին՝ ասելով. «Թող սրանից հետո բեզ անվանեն «Թահմազ Ղուլի»: Եվ նաև տալիս է մի այնպիսի թագափորական հրամանագիր՝ որով ինքը, շահը պարտափորվում է. «Եթե ես անգամ քո համաձայնությամբ չշարժվեմ, ինչ նախաախնքքով ուզում ես՝ ինձ էլ նախաախնք»:

Թահմազ Ղուլին լինում է վեզիր:

Աներոջ ճամբորդական պատրաստությունները հողալով՝ նրան ճամբա է գնում.

Աները վեց-եոթն օրվա ճամբա է գնում չի գնում, թահմազ Ղուլին նրա հետևից մարդ է ուղարկում և մի հարքով աներոջ գլուխը բերել տալիս:

Բոլոր խաները, բեզերը տեսնելով, որ իր խան աներոջ գլուխը կարել տվեց սկզսում են սարսափել այս մարդուց:

[Եվ իսկապես] թահմազ Ղուլին սկսում է ինքնավստահ, համարձակ խաներին և բեկերին կամաց-կամաց, մեկիկ-մեկիկ, ամեն մեկին մի պատրվակ կոպենելով՝ սպանել տար: Ուր նկատի է ունենում, սպանում է: Վերջապես հին խաներից, բեզերից մարդ չի թողնում. մեկիկ-մեկիկ, մեկ-մեկ պատճառով սպանում է: Եվ եթե անկյուններում հատ ու կտոր մնում են, էլ նրանց կարեորություն չէր տալիս, էլ չէր վախենում:

Եվ այսպիսով պարսկական պետութիւնը վերցնում է իր ափի մեջ:

Օսմանցու հետ կռիվ տալիս, ջարդում-ջարդվում. Մոսկովցու հետ Գիւանում, կռիվ տալիս ջարդում-ջարդվում, վերջապես չերկարացնենք:

Բայց պիտի հարց տաք, թե ինչնով էր կառավարում երկիրը: Ո՞րակերպ էր տալիս ղինվորի սոճիկը:

Բոլոր վաճառականներին և հարուստներին թաղանում է, ժողովրդի ապրանքն ու կայքը գրավում: Որ իմանում է, թե մեկը հազար քսակ փող ունի, անմիջապես կանչել տալիս, քսակով փողը առնում և՛ միջից մի հարյուր դուռուշ վերադարձնելով՝ ասում «Գնա, դու էլ սրանով յուր գնա»: Ահա այսպիսով գորքի սոճիկը տալիս էր:

Երբ Քահմազ շահի հետ Քահմազ Ղուլին օսմանցիները դեմ կռիվ է գալիս, մի լուր է հասնում Քահմազ Ղուլիին, թե՛ «ինչ ես կեցել, ազվանը քայլում է Խորասանի վրա մեծաքանակ զորքով»: Քահմազ Ղուլին էլ շահ Քահմազին ասում է, — զգուշացիր, մինչև իմ գալը օսմանցու հետ կըռիվ մի տուր, գնամ ազվանները ցրիվ տամ, վերադառնամ ու միասին կռիվ կտանք [անպայման] հետզ լինեմ:

— Որ օսմանցին հարձակվի, ես պիտի կանգնեմ. — հարց է տալիս շահ Քահմազը:

— Օսմանցին ինքը մեր վրա չի հարձակվիր մինչև մենք նրա վրա չի հարձակվենք, — պատասխանում է Քահմազ Ղուլին:

— Լավ, մինչև քո գալը ես Օսմանցու հետ կռիվ չեմ անի. — ասում է շահ Քահմազը, — և միամտացնում Քահմազ Ղուլիին:

Քահմազ Ղուլին զնում է Խորասանը ազվաններից ազատելու, իսկ շահ Քահմազը [հակառակ իր խոստումին] քշում է Օսմանացու վրա: Օսմանացին շահ Քահմազին այնպես է կռթում, որ խաֆահան թագավորական խայտառակութիւն (շահ պողկունու): Ծահ Քահմազը ձիով փախչելիս ձիուց ընկնում է և չի կարողանում վեր կենալ. մի օսմանցի [ղինվոր] ուղում է նրան խփել բայց Բաղդատի վալի Ահմեդ փաշան հանդիմանում է նրան, ասելով. «ձեռքդ քաշիր խող, նա շահ է, դու իրա-

վունք [աստիճան] չունես նրան ձեռք վերցնելու, դնդակ արձակելու»:

Վերջում պարսիկները մեծ դժվարութեամբ ձի են հասցնում և ազատում շահին:

Այս դեպքը պատմեցին պարսիկները, երբ ևս Սպահանում էի: Նրանք էլ բավականին վնասվել ու ասեծել են այս խուճապի ժամանակ:

ԳՂՈՒՆ ՏԱՍՆԸՆԵՐԿՈՒՆԵՐՈՐԻ

Այս միջոցին Քահմազ Ղուլին Խորասանում ցրում է ազվաններին և վերադառնալով՝ տեսնում է, որ շատ խայտառակ կերպով են պարավել: Սրտում սխ է պահում շահ Քահմազի դեմ և սկսում է նենգութիւն մտածել: Գիշեր-ցերեկ մտածում է, թե արդյոք մնց անի, որ սրան (շահ Քահմազին) մեջակերպ վերացնի:

Այսպես մտածելիս՝ մի միտք է հղանում, մի խորամանկութիւն, և ինքն իրեն խոսում է. «Քահմազ Ղուլի հիմա դու սրան խմիչքի վարժեցրիր. մի օր սրան մի լավ խմացրու և բոլոր մեծամեծներին, խաներին, բեգերին հավաքիր ու մի կերպ մի բան ձեռակերպիր»:

[Հարմար] ժամանակը որ հասնում է, ինչ անում-չի անում, իրանի իշխանութեան բոլոր նահանգներում, գավառներում ինչքան դործի ընդունակ, ձեռներեց, ազգեցիկ մարդիկ որ կան, բոլորին մի հանդածանքով պահանջում և պարտավորացնում է այսինչ ամսի, այսինչ օրը Սպահանում ներկա լինել: Այս հրամանագիրը սուրհանդակով ամենքին հասցնում է, այնպես, որ սրտզված ժամկետին բոլորը Սպահանում ներկա են լինում:

Մինչ սուրհանդակը մարդկանց կանչելու էր շտապում, այստեղ Քահմազ Ղուլին ասում է շահ Քահմազին. — Ծանա, քեզ հետ հինգ-տասն օր ուղում եմ քեֆ անենք, այնպես, որ սեզանը մեջակերպ իսկի չըհավաքենք, ոչ մի խնդրագրի չնայենք, եկող խնդրատուներին էլ վսնդենք: Հինգ-տասն օր մենք մեզ քեֆի տանք, ամբողջ օրով խմենք և հարբած մնանք, սա էլ մի դործ է:

Ծահ Քահմազը հավատում է և խաբվում, նրա համար, որ Քահմազ Ղուլին իր մեծ տղին ամուսնացրել էր շահ Քահմազի քրոջ

հետ. ուրեմն և խնամիներ էին, նրան թը-
վում էր, որ կասկածեին ամենորդ է, կամ
թե իսկի էլ չի կասկածում, որ տակը մի
նենդություն կարող է լինել:

Այսպես, ուրեմն, որեւէ նենդություն
չսպասելով թահմազ Դուլինից, շահ թահմազը
խարվում, համաձայնվում է թահմազ Դու-
լիի նենդավոր առաջարկին:

Մինչ սուրհանդակները հրամանագրեր
են բաժանում, այդ օրերում սրանք սկսում
են քեֆը: Շահ թահմազը սկսում է կոնսեր-
վինգ բաժակի տեղ տասն է խմում, տասի
տեղը տասնհինգը, իսկ թահմազ Դուլին հն
տալիս է բաժակը հն խմեցնում: Ինքը թահ-
մազ Դուլին էլ է խմում [բայց] շահին աչք
բանալ չի տալիս:

Այս այսպես շարունակվում է մինչև այն
ժամանակ, երբ պետութեան ամեն կողմից
կանչված մարդիկ՝ մեծամեծներ, խաներ
հավաքվում են Սպահանի «Սեյտապատ»
կոչված հայտնի տեղը: Այս Սեյտապատը
ձեզ պատկերացնելու համար՝ ասեմօրինակ՝
Պոլսո «Քյաղրա խանեն»: Այնպես զբոսան-
քի տեղ է, հովալի և կանաչազարդ: Ես էլ
գնացի ման եկա, աչքերովս տեսա այս
զբոսավայրը—կանաչ թավշանման, հրաշալի
հրապարակով, գեղեցիկ և նրբակերտ մի
քյոշկ ունի. ահա այս քյոշկում էլ նրանք
խմելիս են լինում, երբ այս Սեյտապա-
տի հրապարակում հավաքվել են նահանգ-
ներից, գավառներից կանչված ավազա-
նիներ, խաներ, բեգեր իմաստուններ—բո-
լորն էլ պետական փորձառութեամբ մար-
դիկ, անտեղյակ թահմազ Դուլիի նպա-
տակին:

Թահմազ Դուլին մեն-մենակ դուրս գա-
լով քյոշկից և աչքի անցնելով հրապարակը,
—Ետրդ էլ եկել էք,—հարցնում է:

—Այո մեր խան, եկել ենք,—պատաս-
խանում են:

—Գիտե՞ք՝ ձեզ ինչի համար եմ կանչել:

—Ոչ, պատճառը չգիտենք խան.—պա-
տասխանում են բոլորը միաբերան:

Թահմազ Դուլին առանց ուշադրութեան
զարձնելու նրանց պատասխանին, մտնում
է քյոշկ և մի քանի բույե հետո դուրս
է գալիս գրկած շահ թահմազին և թող
տալիս կանաչի վրա՝ բոլորովին հարբած:

Շահ թահմազը խելակորույս վիճակում
պառկում է կանաչի վրա, վարտիկ-շապիկը՝
փխսուկի մեջ, վրա գլուխը կեղտոտ, թաղը
գլխից մի կողմ ընկած:

Թահմազ Դուլին սկսում է ճառել՝

«Յաներ, բեգեր, մեր այս շահից դուք
սպասում եք նահանգների բարեկարգու-
թյուն, մեր այս շահի ղեկավարութեամբ
մեր նահանգները թշնամիներից պիտի ա-
ղատե՞ք, նրանց հաղթե՞ք, հետանդե՞ք և
հետո ընտանիքով երեխաներով պիտի
հանդիստ կյանք վայելե՞ք...»

Ներկաներից ոչ մի խոսք: Լուություն:

Շահ թահմազի այդ խայտառակ վիճակը
տեսնելուց՝ նրանց զզվանքն էր առաջացել:

Թահմազ Դուլին նորից սկսում է իր
խոսքը՝

«Մեր այս շահը գեուս երիտասարդ է,
գեուս տնօրծ է (ճահել), երեխա է: Ես,
եթե դուք համաձայն կը լինեք, սրան բան-
տարկած պահեմ, մինչև որ դարձյալ ձեր
օգնութեամբ մեր նահանգները թշնամի-
ներից մաքրենք: Հետո, մինչև այդ մեր շահն
էլ խելքի եկած կըլինի, նորից իր գահի
վրա կընստեցնենք»:

Այս խոսքերին բոլորն էլ համաձայնու-
թյուն են տալիս:

Երբ այսքան մարդու համաձայնութեամբ
ստանում է թահմազ Դուլին, անմիջապես
մի կառքի, թէ մի պատգարակի մեջ գնել
տալով Շահ թահմազին, ուղարկում է Սար-
գիվար քաղաքը՝ բանտարկութեան: Ուրիշ
նահանգների մարդկանց չվստահելով, իր
բարեկամներից և հայրենակիցներից հազար
հոգի շահ թահմազի վրան հսկող է նշանա-
կում: Մի քանի օր անց նրա կնոջն ու երե-
խաներին էլ նույն տեղն է ուղարկում:

Երբ շահ թահմազի խելքը գլուխն է
գալիս, հարցնում է հաղարապետին.— ինձ
մի է տեղափոխել: Հաղարապետը պատաս-
խանում է.— կալանավորված եք, շահս:

Շահ թահմազը հասկանում է, թե ինչ
սպառն է սպասում իրեն, բայց ինքնիրեն
անտարբեր է ձեացնում և լուռ:

Այն հազարապետը, որի հսկողութեան
էր հանձնված շահ թահմազը, թահմազ Դու-
լիի հայրենակիցն ու բարեկամն էր:

է, ուրեմն կատավորութեամբ մնում է թահ-

մաղ Ղուլիի ձեռքում: Պատերազմ է սկսում օսմանցիի դեմ, Մոսկովի դեմ: Չարիւժ գարկիւում: Օսմանցիի հետ հաշտութեան լիզու գտնում, գերիները պահանջում: Օսմանցին էլ կամաւոր կերպով հանձնառու է լինում վերադարձնել թե գերիները և թե գրաված բերդերը: Գիրանն էլ գրավում է Մոսկովցիներին:

Օսմանցիների հանձնելիք բերդերից նրանք, որոնք զինւորական պահակներ են ունենում, չեն ուզում բերդերը հանձնել՝ պատճառաբանելով, որ «այս բերդերը մեր այրունով են դնւած», շատ էլ թաղաւորը (փառիշահը) տվել է, մենք չենք տա:

Թանձաղ Ղուլին նրանց հետ պատերազմ է սկսում: Փառիշահից նորից հրամանագիր է ուղարկւում բերդերին, որից հետո, նոր միայն հանձնում են: Թանձաղ Ղուլին էլ դեսպանութիւն ուղարկելու [Պոլիս] պատրաստութիւն է տեսնում:

Թանձաղ Ղուլին այնուհետև իր զինւորը քաշում տանում է Մուղանի անապատը:

Մուղանի անապատում չորս-հինգ հազար Խորասանցի՝ իրան մերձավոր մարդկանց խրատում է, որ ինքը այսպես-այսպես մի «գործի» պիտի ձեռնարկե, դուք «այսպես-այսպես» արտահայտվեցեք:

Այսպես նրանց «խրատելուց» հետո դարձյալ հրամանագիրներ է ուղարկում շրջաններին, մեծամեծներին, վաղիրներին, խաներին, բեգերին, մեկ-մեկ էլ աղղեցիկ նահանգական վազանիներին, որ գան հավաքվեն Մուղանի անապատը:

Եվ հավաքվում են: Հավաքվում են և զգուշութեամբ սպասում:

Թանձաղ Ղուլին կարգադրում է, որ մեծամեծները-մեծամեծների, խաները-խաների և բեգերը-բեգերի կողքի կանգնեն և ասում է.

— Ձեզ ինչի համար կանչել տվի գիտեք:

— Ձե, չգիտենք խան, — պատասխանում են բոլորը միաբերան:

Թանձաղ Ղուլին սկսում է՝

«Ահալասիկ մեր նահանգներից թշնամիներին հանեցինք: Այսուհետև կարգ ու կանոն է: Ապահովութիւնը կատարյալ է բեգեր. գնացեք մեր շահին հանեք [բանտից].

ես էլ դեռ իմ նահանգը մի քիչ հանդրատնամ»:

Խորասանցին սկսում է գոռոռալ, սպահանցին սկսում է լալ, մնց որ թանձաղ Ղուլին «խրատել» էր, թե «Տեր իմ՝ դու մեզ թողնելով՝ ուր պիտի գնաս, մենք միայն քեզ ենք ճանանչում, մեր հայրն էլ դու ես մեր մեծն էլ, մենք ուրիշ շահ էլ չենք ճանաչում, դու ես մեր շահը...» այսպես սկսում են աղմկել ու լալ:

Երբ այս պատասխանը բոլորը լսում են՝ տասը հազար հոգի էլ նրանց կողմն են անցնում:

Բայց մյուս կողմից՝ մեծամեծներից, խաներից, բեգերից ոմանք ասում են. — «Լինելու բան է այս, քանի շահը կա, այդպիսի բան չի կարող լինել: Կարելի բան է, որ այս պարզամտը [սամիկը] շահ լինի, քանի որ ինքը շահագուն չէ:

Թանձաղ Ղուլին լսում է իրեն չուզողների առարկութիւնները: Բայց այդ ժողովում (հավաքութեւ) նրանց դեմ ոչինչ չի ասում, այլ այդ ոխը իր սրտումը պահում: Իրա կողմնակիցներին դառնալով՝ նորից հարցնում է.

— Ինձ ուզում եք:

— Այո ուզում ենք, — ասում են նրանք.

— Եթե ուզում եք, մեկ-մեկ մուրհակ [ստորագրութիւն] տվեք ինձ, — ասում է Թանձաղ Ղուլին:

Ուզողները ստորագրութիւն են տալիս, ազոթքն էլ կատարում և Թանձաղ Ղուլին իրենց շահ հայտարարում:

Իսկ չուզողներին Թանձաղ Ղուլին որի է քաշում:

ԳԼՈՒԽ ՏԱՄՆՈՒՆԻՔԵՐՈՐԴ

Մի դրամականիք (դրամի վրայի գրութիւն) է փորագրել տալիս, ուր գրված էր (Միքքի պեր դեր Սելաթինի ճիհանի շահի շահան նատիրը սահապի քըրան) «Աշխարհի սուլթան, շահերի շահ, հազվագյուտ բախտավոր» և նրանից հետո ինքն իրեն անվանեց նատիր շահ: Այդպես էլ անվանում են նրան:

Ծան լինելու, տասներկու տարեկան մի աղջիկ է ունենում, որին խեղդել է տալիս և ինչքան աղջիկ դավակ է ունենում

բոլորին էլ խեղդել է տալիս, որպեսզի չլինի ամուսնանան և քուսակի մեկի գիրկը մանեն, այնքան նա խանդոտ է լինում: Իսկ տղաներին պահում է:

Բունն ցանկություն զգալով զեպի գահը [շահական] Մուղանի անապատից դորքը քաշում գնում է Սպահան: Այստեղ նկատում է, որ Սպահանցիք գժգոն են ինքն իրեն շահ հայտարարելուց և սկսում են գաղանի խորհրդակցություններ (խմբում, խլրատում):

Թահմազ Ղուլին երբ տեսնում է, որ Սպահանցիք իրեն չեն ուզում, իր մեծ ազի ծծկեր երեխային մոր գրկից բերել տալով և գահի վրա նստեցնելով՝ հավատարմության երդում է տալիս երեխային: Վերջապես, չէ՞ որ երեխայի մայրը շահի քույրն էր, ահա և շահի սերունդից: «Ինձ չէ՞ք ուզում, ահա ձեզ շահ, սրան խո տակիք չունեք,—ասում է Թահմազ Ղուլին Սպահանցիներին:

Երեխայի անունով փող է կտրել տալիս: Իսկ երեխան տասներեք-տասներկու ամսական, ծիծ է ուզում, լալիս է, մորն է ուզում:

Թահմազ Ղուլին երբ այս երեխային գահ է նստեցնում, հրատարակային առյառնի (հավաքույթի) է կանչում բոլոր խաներին ու բեյերին: Մինչ երեխան լալիս ծիծ է ուզում, Թահմազ Ղուլին նրա լացը թարգմանելով ասում է. «Գիտե՞ք ձեր շահը ինչ է հրամայում. բարեկամիս բարեկամ եղեք, թշնամուս-թշնամիս ևս նրանց ոտնիկ կտամ, թող ինձ լավ ծառայեն ասում է ձեր շահը»:

Երեխային մի քանի օր շահ կարգելով, Սպահանում գանձող իրեն հակառակորդներին (բողոքողներին) բոլորին մաքրում է այնպես, ինչպես ազվեսը հավաքունն մանելիս և՛ ոչ մի հավ ողջ չի թողնում: Այդպես էլ Սպահանում իրեն չուզողներից ոչ մեկը նրա ձեռքից չի պրծնում. հրատարակը «մաքրում» «ստիպում» է [թշնամի չի թողնում], և նորից ինքնիրեն շահ հայտարարում:

Շահ լինելուց հետո չորս օր մուսնաթիկ է կանչել տալիս: Առաջին օրը կանչել է տալիս, թե՛ «որ շահը հարցնելու լի-

նեք, շահը չարյարի է»: Երկրորդ օրը կանչել է տալիս, թե՛ «շահը զրզլաբաշ է»: Երրորդ օրը կանչել է տալիս, թե՛ «շահը հայ է»: Չորրորդ օրը կանչել է տալիս, թե՛ «շահը հրեա է»: Ահա իր մասին այսպիսի հայտարարությամբ չորս օր մուսնաթիկ է կանչել տալիս Թահմազ Ղուլին: Հինգերորդ օրը Սպահանի բոլոր դասակարգերը (էմնաֆ) առյառնի (հավաքույթի) կանչելով.—«Չորս օր է մուսնաթիկ եմ կանչել տալիս. լսեցի՞ք»,—ասում է: Հավաքվածները պատասխանում են,—

— Այո, շահս, լսեցինք:

— Ինչու կանչել ավի այդ մուսնաթիկներին գիտե՞ք:

— Ձե՛, չգիտենք,—պատասխանում են բոլորը:

Այն ժամանակ Թահմազ Ղուլին բացատրում է. «Նրա համար կանչել ավի մուսնաթիկը, որ երբ ասում էր, թե շահը չարյարի է, չարյարիները զրզլաշիններին թալանեն»: Կամ թե երբ կանչել ավի թե՛ «շահը Ղզլաբաշ է, զզլաշները չարյարիների ունեցվածքը թալանեն»: Կամ թե երբ կանչել ավի թե՛ «շահը հայ է, հայերը թալանեն մյուսների ունեցվածքը»: Կամ թե երբ կանչել ավի թե՛ «շահը հրեա է, հրեաները թալանեն մյուսների ունեցվածքը»:

«Ձինի, որ զրզլաբաշը չարյարիին նեղություն տա և կամ հայը զրզլաբաշին, չարյարիին, հրեային նեղություն տա կամ հրեան զզլաբաշին, չարյարիին, հային նեղություն տա: Ահա տակիքս քուսակներ: Գնացեք ախրսը նման ապրեցեք, թե ոչ գլուխներդ շահ գլխի նման կը կարեմ ու առաջնիդ կնեակեմ»,—ասում է Թահմազ Ղուլին և վճռում է նրանց իր [մեծության] ներկայությունից:

Ահա Թահմազ Ղուլիի շահ դառնալու պատմությունը, այնպես, ինչպես լսեցինք ու գրի առանք նրա հորեզրոր ազայի պատմածով:

ԳՒՈՒԽ ՏԱՄՆԸՉՈՐՍԵՐՈՐԳ

Հիմա ձեզ պատմենք, թե Թահմազ Ղուլին ինչպես է սպանում շահ Թահմազին:

Մենք նախապես հիշատակեցինք, որ Հընդ-

կատանից դարձին, Հերաթ քաղաքում ճամբուս դրվեցինք և քաղաք առ քաղաք դեպի Պոլիս ենք առաջանում:

Մեր ճանապարհի վրա է եղել Սապղիվար քաղաքը: Մտանք ներս և մի քանի օր այս քաղաքում մնացինք:

Մի պարսիկ աղնվականի նկատմամբացանք—բարեկամացանք: Դու մի տախ այս պարսիկ աղնվականն էլ, Միրզա-Ալի անունով՝ նվազի սիրահար է եղել: Մեզ պատմեց, թե ոնց է սպանվել շահ Քանձաղը:

— Քեզ կը պատմեմ նրա համար, որ դու օտմանցի հայերից ես, զաղանիք կը պահես. այն ինչ Պարսկաստանի ժանձկտականն էլ, հայն էլ ծայր-աստիճան բանասրկու են լինում:

— Սկզբում,—սկսեց պատմել Միրզա-Ալին,—դուք որ Ղանաահարից Հնդկաստան էիք գնում, Քանձաղ Ղուբին սրտեզ կանչեց իր մտա իր մեծ տղին: Ես պատասխանեցի, թե Քապուլ քաղաքը գրավելուց հետո եկավ աղան:—Ի՞նչ պատճառով կանչեց,—հարցրեց Միրզա-Ալին: Մենք պատասխանեցինք—այն գիտենք միայն, որ տղին տեսնելիս, հրապարակով ասաց՝ «Տղնա, ես Հնդկաստան եմ գնում. քեզ հետ այտեզ մի քիչ միասին մնամ ու կարոտս առնեմ»—ասաց ու հետը կանանոց տարավ: Մեզ միայն այսքանն է հայտնի թե կանանոց գնալուց հետո նրանց միջև ինչ զաղանի խոսակցութիւնն է եղել, այդ ոչ ոք չգիտի: Որ հարցնես, թե աղան ինչ գործի վրա էր.—քսան երեսուն հազար ձիավորով նահանգ առնահանգ ման էր գալիս, վերահսկողութիւնն էր անում իշխանաց իշխան տխորոտով: Մենք մտածեցինք, որ ինչ պիտի լինի նրանց խոսակցութիւնը, քանի որ ինքը Հնդկաստան է գնում, պիտի պատվիրէ, որ նախազաններին լավ հսկի: Մենք մեր խելքով այսպես դատեցինք, ասացի:

Միրզա-Ալի բարեկամս մեզ այսպես պատասխանեց.—Այո, վարպետ Արութիւն, ճիշտ ես. բայց հենց այդ կանանոցում էլ պատվիրել է, որ կը գնաս շահ Քանձաղին կօպանես, որպեսզի ասպարեզը քեզ մնա տղաս. ինչու որ ես Հնդկաստան եմ գնում, ով գիտե կարող է և չվերադառնամ:

Ահա այն ժամանակ, երբ դուք Քապուլից ելնելով Սայրեբի կերճն էիք հասնում,

աղան էլ Սապղիվար հասավ, բանակ դրեց քաղաքից դուրս:

Կանչում է իր հազարապետներից մեկին և ասում.—գնա շահ Քանձաղի տղին ու կընոջը կանանոցում սպանիր. իսկ շահ Քանձաղին էլ առավտար շուտ մի քանի ժամվա ճանապարհ տար և այնտեղ սպանիր: Այդ հազարապետը պատասխանում է.

«Քապուլիցի, ես շահ Քանձաղի հացով եմ մեծացել-կշտացել, իմ արշան մեջ շահ Քանձաղի հացը կա. ես նրան պարտական եմ. ավելի լավ է դու ինձ սպանես քան թե այդպիսի գործի ուղարկես:

Չեր շահ հայրը [մերժուճա] լսելով ինձ պիտի սպաննե չէ՞. թող սպաննե. ես այդ մարդու վրա սուր չեմ կարող բարձրացնում:

— Իմ խոսքը չես անում դավաճան, բուռակ,—հանդիմանելով նեղանում է Քանձաղ Ղուբի տղան: Բայց հազարապետը չի ազդում, մնում է անտարբեր:

Հետո Քանձաղ Ղուբի տղան Սարասանի քրդերից մի քուրդ հազարապետ է կանչում և նրան նույնը հրամայում: Այդ քուրդ հազարապետը համաձայնվում և պատասխանում է.—Սա՛ն իմ կտաննեմ:

Եվ այս քուրդ հազարապետը մի քանի հոգով գալիս մտնում է շահ Քանձաղի կանանոցը: Վշտահար շահ Քանձաղը կռահում է գլխին գալիքը:

Այս քուրդ հազարապետը շահ Քանձաղի տղին ձեռք է առնում սպանելու համար: Շահ Քանձաղը սկսում է աղաչել հազարապետին.—Աճան,—ասում է նա.—գիտեմ ինձ էլ, կնոջս էլ պիտի սպանեք, բայց այս 12 տարեկան տղիս միք սպանի, տար քեզ սարուկ լինի, ծառա լինի. ժամանակ կգաս և ձեզ պետք կգա: Շատ է աղաչում շահ Քանձաղը, որ տղին չսպաննեն, բայց այդ անդուխտ քուրդ հազարապետը չի լսում: Տղեն էլ ոնց է աղաչում, ոնց օգնութիւն կանչում, այդ տասներկու տարեկան տղեն:

Շահ Քանձաղի աչքի տաջ աղի գլուխը կարում են. վերջն էլ կնոջն են բերում մեջ տեղ, կինն էլ հզի, հաղիվ հինգ տաս օր է մնացել որ ծնի. նրա էլ փորը ձեղքում են: Շահ Քանձաղին էլ տանում են Սարղիվարից հետո գլուխը կտրում:

Ահա ինչ որ զաղանաբար և լալով պատ-

րեց մեր բարեկամ Սարգիստրոսի Միրզա-Ալին և մենք էլ սնց որ լսեցինք, այնպես դրի առանք այս տեսքում:

Վերադարձի այս ճանապարհին մի բարեգործ իջևան է շինել տվել այս ճանապարհի վրա: Մենք էլ այս իջևանում կանգ առանք: Իջևանը որոշ չափով ավերվել էր չոր ու ամայի շրջանում լինելուց [ոչ բանուկ ճանապարհ]:

Այս իջևանին սաֆրան-խան (իջևան-քրքում) անունը տվել են. և ամբողջ իջևանը քրքում է բուրում: Շինված է արվեստով և գեղեցիկ: Մանող մարդը կը կտրչի [այնքան բարդ է]: Քատրդա-ի (նավահանգիստ Պոլսում) նավամատուցից մեծ է և բացի դրանից իջևանը իրար նման փողոցների է բաժանված: Ասացին որ այստեղ հիմի զողեր են տպրում: Մենք էլ շատ մեջը չմտանք իսկույն ճամբա ընկանք:

Հասնելով մի քաղաք, մի պարսկից հարցրինք այս սաֆրան խանի մասին և մարդը պատմեց հետևյալը.

— Մեր Սպահանում, ժամանակին շատ, չափից դուրս անտրականներ ու վաճառականներ են լինում: Սրանց անունները Հինդում ու Սինդում հայտնի են լինում: Հնդկաստանում մի անվանի վաճառական Սպահանի վաճառականների այս հոչակը չի կարողանում տանել և ինքն իրեն նեղանտով (ջղայնանալով) բազմաթիվ ուղտերի վրա սաֆրան բեռնում և տալիս է իր ծառային, պատվիրելով, որ սա տանի այս ապրանքը Սպահան քաղաք և ծախի մի մարդու [մի անդամից] միատեսակ փողով:

Ծառան անուն-բերում է Սպահան և մաքսը տալով բեռնաթափում մի իջևանում: Վաճառականները գալիս հարցնում են, թե սաֆրանը ծախմե է:—Այո, ծախու է:—Ինչ հս ուղում պաթմանին: Ծառան, թե՛ լրիվ անսթև ետ: Վաճառականը, թե՛ ամբողջը թնչ հմ անելու, այդքան ուժ չունիմ. ինչքան կուզեմ, այնքան կառնիմ: Ծառան թե՛ ես իմ տիրոջից պատվեր ունիմ որ այս ապրանքը Սպահան բերեմ մի մարդու՝ մի տեսակ փողով մի անդամից ծախեմ: Պատվիրեց նաև որ չլինի երկու մարդու ծախեմ:

Վաճառականները ծաղր ու ծիծաղով թողնում գնում են:

Տարի ու կես սպասում է, բայց գնորդ չի գտնում: Իր տիրոջը լուր է ուղարկում:

Տերն էլ հրամայում է՝ սաֆրանը Հնդկաստան ետ բերել: Եվ ծառան բեռնելով ապրանքը՝ հեռանում է Սպահանից: Դարձի ճանապարհին կանգ է տնում այնտեղ, որ այս խանը շինել տվող վաճառականը նոր հիմքը փորել տվել, ցեխն է շաղախել տալիս:

- Բեռդ թնչ է, այ վաճառական:
- Սաֆրան է, պատասխանում է ծառան:
- Որտեղից հս բերում և ո՞ւր տանում:
- Հնդաստանից եմ բերել և էլի Հնդկաստան եմ տանում:
- Ինչու չծախեցիր:

— Տերս պատվիրել էր, որ այս ապրանքը Սպահան տանեմ ու մի մարդու, մի տեսակ փողով և միանգամից ծախեմ: Տարի ու կես սպասեցի Սպահանում և այդպիսի գնորդ վաճառականի չհանդիպեցի: Հիմի տիրոջս մոտ, ետ եմ տանում:

Խանը շինել տվող վաճառականի սիրտը նեղվում է [այս անպատվությունը չի կարողանում տանել]. — Եմ, — ասում է, — քո տերը այդպիսի [մեծ] վաճառական է կղել (հմ): Սակարկում է, կշեռք բերում և թնչ տեսակ փող են ուզում, հարցնում է: Ծառան պատասխանում է. — շահի, — (շահին Պոլսո փողերի նման մի բան է, հաղվադյուտ է, չորս հատը մի աբրասի է): Բոլորը կշռում և թափել է տալիս շինվող իջևանի ցեխի մեջ և նրա ուղած փողն էլ տալիս ու ասում՝

— Գնա, տեսածիդ պես տիրոջդ պատմիր: Ահա թե ինչու այդ իջևանի անունը «Սաֆրան-խան» է մնում:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏԵ

«Պատմություն Քահմաղ Դուլու» տեքստը գտնվում է Մատենադարանի № 2722 ձեռագրի էջ 34—40 վրա: Հեղինակն է Քամբուրջի Քուչուկ Արուսթինը. դժվար թէ ձեռագիրը հեղինակի ինքնագիրը լինի, որովհետև նա զբաղված, կամ ավելի ճիշտ արտապրված է, 1797 թվին, հեղինակի նկարագրված դեպքերից 62 տարի հետո: Ձեռագրի սկզբի մասում 1—32 էջերի վրա միևնույն զբչի ձեռագրով արտապրված է «Պատմություն Աբրահամ Կաթողիկոսի Կրեմացույ» աշխատությունը: Ձեռագիրը բաղկացած է 49 էջից՝ 31.21¹/₂ մեծության:

Քուչուկ Արուսթինի սույն պատմությունը գրված է հայերեն տառերով և տաճկերեն բառերով: Նա տաճկերեն լեզվով լույս է տեսել 1800 թվին Վենետիկում, որից Քարգամանվիլ է ֆրանսերեն երկու հրատարակությամբ:

Հայերեն լեզվով Քուչուկ Արուսթինի պատմությունը լույս է տեսնում առաջին անգամ:

Բանասերներից ոմանք այս երկի հեղինակն են համարել Սայաթ-Նովային:

Սույն տեքստի հրատարակումը մեր բանասերներին նարախորություն կընձեռի նաև այդ հարցի պարզաբանման համար:

Քարգամանությունը կատարել է Մ. Խորխորունին: